ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ «ՄՈՄԻԿ» ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՇԱՐՔԻ 12 ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 1993

Հեղինակ-կազմողներ՝ ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խմբագիր՝ ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է՝ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՐՁՐԱՃՆՈՐՀ Տ. ԽԱՉԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ (Տերունական շարքի 13 գլխավոր պատկերները)

Գրքում ներկայացվում են Ավետարանի Տերունական շարքի տասներկու առանցքային պատկերները՝ Ավետում, Ծնունդ, Տեառնընդառաջ, Մկրտություն, Պայծառակերպություն, Մուտք Երուսաղեմ, Վերջին ընթրիք, Ոտնլվա, Խաչելություն, Հարություն, Համբարձում, Հոգեգալուստ: Համառոտ տեղեկություններ են տրվում պատկերներից յուրաքանչյուրի պատկերագրության ու խորհրդաբանության վերաբերյալ:

Նախատեսված է քրիստոնեական արվեստով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

© Հայ քրիստոնեական մշակույթի «ՄՈՄԻԿ» միություն, 1998

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«... Եթե քեզ մոտ գա որևէ հեթանոս և հարցնի՝ ցույց տուր ինձ քո հավատը... տար նրան եկեղեցի և կանգնեցրու սուրբ պատկերների առջև»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՄԱՍԿԱՑԻ

Քրիստոնեական Եկեղեցու աստվածապաշտական համակարգում կարևոր դեր է կատարում եկեղեցական կերպարվեստը: Այն անցել է զարգացման տևական շրջան՝ սկսած վաղ քրիստոնեությունից մինչև մեր օրերը: Եկեղեցու հայրերը ժամանակին տեսականորեն հիմնավորել են պատկերների գոյության անհրաժեշտությունը: Ըստ նրանց՝ քրիստոնեական թեմաներ արծարծող պատկերները հոգևոր ներգործության դեր ունեն, այսինքն օգնում են «զգայականի միջոցով դեպի հոգևորը բարձրանալուն» (Դիոնիսիոս Արիսպագացի), միաժամանակ ունեն պատմողական, տեղեկատվական նշանակություն («պատկերն անգրագետի համար նույնն է, ինչ որ գիրքը՝ գրագետի համար»— Հովհաննես Դամասկացի):

Եկեղեցու որդեգրած պատկերահարգության սկզբունքը հիմնվում է Աստվածաշնչի համապատասխան փաստերի և Եկեղեցու հայրերի մշակած դրույթների վրա: Վաղ միջնադարյան պատմաշրջանից ի վեր պատկերահարգության սկզբունքը պահպանում է նաև Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին:

Համաքրիստոնեական կերպարվեստի մի ինքնատիպ ճյուղն է հայ միջնադարյան արվեստն իր բազմապիսի դրսևորումներով: Նրա մեջ առանձնահատուկ տեղ է գրավում գրքի գեղանկարչությունը՝ մանրանկարչությունը:

Միջնադարում առավել հաճախ պատկերազարդվել են Ավետարանները, ապա՝ Աստվածաշունչ, Ծարակնոց, Ճաշոց, Մաշտոց մատյանները, սակավադեպ՝ պատմագրքերն ու մյուս ձեռագրերը: Ավետարանի գեղարվեստական հարդարանքը սովորաբար հետևյալ կառուցվածքն էր ունենում. սկզբում համաբարբառի խորաններն են, այնուհետև Տերունական պատկերները, ապա հերթականությամբ չորս ավետարանները՝ յուրաքանչյուրի սկզբում համապատասխան ավետարանչի պատկերով ու անվանաթերթով: Բնագրի էջերը զարդարվում էին նաև բազմապիսի լուսանցազարդերով, երբեմն՝ թեմատիկ լուսանցապատկերներով և գեղեցիկ զարդագրերով:

Տերունական (կամ տնօրինական, այսինքն՝ Քրիստոսի տնօրի-

նած) են կոչվում Քրիստոսի կյանքին նվիրված, Նրա վարքն ու տնօրինությունը ներկայացնող պատկերները (Տերունական նաև նշանակում է աստվածային, սրբազան, օրինակ՝ Աստվածաշունչը երբեմն կոչվում է Տերունական Գիրք, իսկ Եկեղեցին՝ Տերունական տուն, Քրիստոսի ավանդած միակ ամբողջական՝ «Հայր մեր» աղոթքը՝ Տերունական աղոթք):

Վաղ քրիստոնեության շրջանում համեմատաբար քիչ թվով թեմաներ են ընդգրկվել Տերունական պատկերաշարում: Նրանցում մեծ տեղ է հատկացվել խորհրդանիշ պատկերներին: Հետագայում շարքն ավելի է ընդարձակվել, մշակվել ու ամբողջացել, հասնելով կանոնական վիճակի, միաժամանակ անցել է զարգացման ուշագրավ ճանապարհ և հիմքում ունենալով համաքրիստոնեական պատկերագրության ու խորհրդաբանության չափանիշները, յուրաքանչյուր երկրում կրել է տեղի հնագույն արվեստի, ազգային մտածողության, Եկեղեցու դավանաբանության և ավանդության ազդեցությունը:

Հայկական մանրանկարչության մեջ հայտնի հնագույն Տերունական պատկերները պահպանվել են Զ դարից: Դրանք կցված են 989 թ. «Էջմիածնի Ավետարանի» (ՄՄ № 2374) վերջում և ներկայացնում են չորս տեսարան՝ Զաքարիայի ավետումը, Ավետում, Մոգերի երկրպագությունը, Մկրտություն: Այս մանրանկարների ժամանակակիցն է ձեռագրի փղոսկրյա դրվագազարդ կազմը, որ նույնպես ներկայացված են Տերունական տեսարաններ:

Բազմաթիվ թեմատիկ պատկերներ են պահպանվել Ժ—ԺԱ դդ. հայերեն ձեռագրերում, որոնց թվում Տերունական պատկերաշարի հարստությամբ աչքի են ընկնում հատկապես «Վեհափառի Ավետարանը» և «Մողնու Ավետարանը»: Թեմատիկ ընդգրկման խորացման և պատկերագրական հորինվածքների կատարելագործման նոր շրջան էին ԺԳ, ԺԴ դարերը, երբ հայկական գրքարվեստն ու մանրանկարչությունը հասան իրենց զարգացման բարձրակետին:

Որմնանկարչության մեջ ևս Տերունական շարքի բազմաթիվ պատկերներ են ստեղծվել, սակայն դրանք մեծ մասամբ վատ են պահպանվել: Դրանց շարքում վաղեմությամբ, թեմատիկ հարստությամբ և պահպանվածությամբ մեծ արժեք են ներկայացնում հատկապես Աղթամարի Ս. Խաչ վանքի 921 թ. որմնանկարները:

Ինչպես նշեցինք, Ավետարաններում Տերունական պատկերները սովորաբար զետեղված են լինում բնագրի սկզբում (հաջորդում են խորաններին), սակայն որոշ ձեռագրերում դրանք գտնվում են բնագրի համապատասխան մասերում: Տերունական պատկերների թիվը տարբեր մատյաններում տարբեր է՝ մեկից մինչև երեք տասնյակ (իսկ Մատենադարանի № 7639, 1610 թ. ձեռագրում դրանց քանակը 59 է):

Ավելի հաճախ լինում են այդպիսի 12, կամ 14 պատկեր: Ըստ հերթականության դրանք հետևյալն են. 1. Ավետում, 2. Ծնունդ (Մոգերի երկրպագությունը), 3. Տեառնընդառաջ (Քառասնօրեա գալուստն ի տաճար), 4. Մկրտություն, 5. Պայծառակերպություն (Այլակերպություն), 6. Մուտք Երուսաղեմ, 7. Վերջին ընթրիք, 8. Ոտնլվա, 9. Խաչելություն, 10. Հարություն (Յուղաբեր կանայք և հրեշտակը), 11. Համբարձում, 12. Հոգեգալուստ: Այս առանցքային պատկերներից բացի ձեռագրերում պատկերվում են նաև Քրիստոսի հրաշագործությունները, հիվանդների բժշկումը, առակներից մի քանիսը, մատնությունն ու ձերբակալությունը, խաչից իջեցումն ու թաղումը, դժոխքի ավերումը, վերջին դատաստանը; Աստվածամոր վերափոխումը և այլն:

Վաղ միջնադարյան Հայաստանում որմնանկարչության մեջ Տերունական շարքի պատկերման մասին ուշագրավ վկայություն է պահպանվել է դարի սկզբների նշանավոր վարդապետ Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» երկում, ուր հեղինակը նաև ընդգծում է պատկերների կարևորությունը, գրելով՝ «Աստծո եկեղեցիներում նկարված ենք տեսնում Քրիստոսի կատարած բոլոր սքանչելագործությունները, ինչպես Գրքերում է գրված... **ծնունդը, մկրտությունը, չարչարանքները, խաչելությունը, թաղումը, հարությունը և երկինք համբառնալը:** Եկեղեցիներում նկարում են այս բոլորը, ինչ որ Սուրբ Գիրքն է պատմում: ... Գրքերից միայն ականջներն են լսում, իսկ **պատկերները աչքերով տեսնում են, ականջներով լսում և սրտով հավատում»:** Ինչպես տեսնում ենք, հայ վարդապետն իր հակիրճ ձևակերպման մեջ շեշտել է պատկերների կատարած և՛ ճանաչողական ու զգայական, և՛ հոգևոր՝ աստվածապաշտական դերը:

Միջնադարյան արվեստն ընդհանրապես և մանրանկարչությունը մասնավորապես կանոնական էր՝ արվեստագետին որոշակի սկզբունքներ ու շրջանակներ թելադրող, սակայն դա չպետք է սոսկ կաշկանդող գործոն համարել, քանի որ կանոնն ինքնին տևականորեն մշակված ու հղկված սկզբունքների (խորհրդաբանական, պատկերագրական, դավանաբանական, գեղարվեստական) հանրագումարը լինելով, փաստորեն մի դպրոց էր ամեն նկարչի համար: Յուրահատուկ էր նաև միջնադարյան արվեստագետի՝ գործի նկատմամբ ունեցած մոտեցումը: Պատկերը նրա համար ոչ թե նպատակ էր, այլ՝ միջոց, որով պետք է վերարտադրեր այն, ինչ գրված էր Սուրբ Գրքում: Ձեռագրերը հարդարվում էին ոչ միայն Տերունական պատկերներով, այլև ըստ ամենայնի զարդանկարվում, որպեսզի ընթերցողին հրավիրեն դեպի «քառավտակ, ծաղկավետ ու բերկրալի երկիր», այն է՝ Քրիստոսի Սուրբ Ավետարանը:

Կանոնական լինելով հանդերձ, հայկական մանրանկարչությունը

ինքնատիպ է թե՛ պատկերագրությամբ և թե՛ հատկապես գեղարվեստական, ոճական բազմազանությամբ, զարդանկարի ու գունաշարի հարստությամբ, որն արվեստագետների ստեղծագործական որոնումների ու ներդրման արդյունքն է: Իրենք՝ միջնադարյան նկարիչներն ու ծաղկողները մեծ մասամբ վանականներ էին, հոգևոր կրթություն ստացած մարդիկ, որոնք լիովին տիրապետում էին ոչ միայն պատկերազարդման արվեստին, այլև քաջագիտակ էին Հին և Նոր Կտակարաններին, Հայոց Եկեղեցու դավանաբանությանն ու ավանդությանը:

Հայ միջնադարյան արվեստն ու մանրանկարչությունը մինչև այժմ մեծ մասամբ ուսումնասիրվել են պատմամշակութային ու գեղարվեստական արժեքի տեսանկյունից, իսկ պատկերագրության և հատկապես քրիստոնեական խորհրդաբանության հարցերը մնացել են ստվերում: Մինչդեռ հենց խորհրդաբանությունն է այն հիմնական բանալին, որով հնարավոր է ճշտորեն ընկալել միջնադարյան արվեստագետի աշխատանքը: Այս իրողության գիտակցությամբ էլ պայմանավորված է մեր աշխատության նպատակը. այն է՝ ներկայացնել Տերունական շարքի 12 գլխավոր պատկերները՝ ընդհանուր պատկերացում տալով դրանց պատկերագրության և խորհրդաբանության մասին: Հիմնական նյութը հայկական մանրանկարչությունն է, սակայն յուրաքանչյուր թեմայի պատկերագրական զարգացումն ավելի ամբողջական ներկայացնելու համար վերատպությունների շարքում օգտագործել ենք հայ և համաքրիստոնեական կերպարվեստի այլ նմուշներ (խճանկար, որմնանկար, գեղանկար): Խորհրդաբանական վերլուծության համար ելակետ ենք ընդունել Ս. Գրիգոր Տաթևացու մեկնությունները, որը փաստորեն ընդհանրացրել է նախընթաց շրջանի աստվածաբանական, մեկնողական մտքի նվաճումները և դրանք վերարտադրել ըստ Հայաստանեայց Եկեղեցու դավանաբանության: Օգտվել ենք նաև հայրաբանական գրականությունից ու այլ աղբյուրներից:

Քանի որ Տերունական պատկերների ճիշտ ընկալման համար առաջնային նշանակություն ունի Ավետարանի բնագիրը, ուստի յուրաքանչյուր թեմայի պատկերագրությանն ու խորհրդաբանությանն անդրադառնալուց առաջ զետեղում ենք չորս Ավետարաններից որևէ մեկի կամ երկուսի համապատասխան հատվածը: Հիմնական շարադրանքը փորձել ենք չծանրաբեռնել մասնագիտական խրթին վերլուծություններով, քանի որ մեր նպատակը ոչ թե գիտական խորը ուսումնասիրությունն է, այլ Տերունական 12 պատկերների ներկայացումը հանրամատչելի ձևով: Սույն աշխատանքը մեզանում նմանօրինակ առաջին փորձը լինելով, չի կարող զերծ լինել թերություններից, ուստի երախտագիտությամբ կընդունենք համապատասխան մասնագետների դիտողությունները:

ԱՎԵՏՈՒՄ

ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ, Ավետում («Թարգմանչաց Ավետարան» 1232 թ., ՄՄ № 2743)

ԱՎԵՏՈՒՄ— ԲԱՐԻ, ԲԵՐԿՐԱԼԻ ԼՈՒՐ, ՈՐՆ ԱՍՏԾՈ ԳԱԲՐԻԵԼ ՀԸՐԵՇՏԱԿԸ ՀԱՂՈՐԴԵՑ Ս. ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԻՆ՝ ՆՐԱ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՑ ՀՂԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼԻՔ ԾՆՆԴՅԱՆ ՄԱՍԻՆ:
ԱՎԵՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԳԱՄԱՆՈՐԵՆ ՇԱՐԱԴԸՐՎԱԾ Է ՂՈՒԿԱՍԻ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ:

«... Գաբրիել հրեշտակը Աստծո կողմից ուղարկվեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ, որ նշանված էր Հովսեփի անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից: Եվ այդ կույսի անունը Մարիամ էր: Եվ հրեշտակը, գալով նրա մոտ, ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Իսկ նա այս խոսքերի վրա խռովվեց և մտքում խորհում էր, թե ինչ բան էր այս ողջույնը: Եվ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա դու կհղիանաս և կծնես մի Որդի ու Նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի: Եվ Տեր Աստված Նրան կտա Նրա հոր՝ Դավթի աթոռը և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախճան չի ունենա»:

Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: Հրեշտակը պատասխանեց և նրան ասաց. «Սուրբ Հոգին կգա քո վրա և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև Նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծո Որդի կկոչվի...»: Եվ Մարիամն ասաց. «Ահա՛վասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ»: Եվ հրեշտակը հեռացավ նրանից»:

ՂՈՒԿԱՍ Ա. 26-38
տե՛ս նաև
ՄԱՏԹԵՈՍ Ա. 18-25

Ավետարանի Տերունական պատկերաշարը սովորաբար սկսվում է Ավետման տեսարանով, քանի որ այն ներկայացնում է Հիսուսի մարդեղության՝ երկրային առաքելության սկզբնավորումը: Ս. Գրիգոր Տաթևացին մեկնաբանելով հրեշտակի՝ Մարիամին ուղղված խոսքերը, գրում է. «Ուրախ լեր բերկրեալ, Տէրն ընդ քեզ»— ողջույնս այս գովելի է վասն չորս պատճառի. նախ վասն առաքողին, զի Աստուած առաքեաց զողջոյնն: Երկրորդ, վասն պատգամաւորին, զի հրեշտակապետն Գաբրիէլ էր ողջունաբերն: Երրորդ, վասն նրա, որ ընկալաւ զողջոյնն, զի

2 ՆԿԱՐԻՉՆԵՐ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ ԵՎ ԱՆՀԱՑՏ, Ավետում («Գլաձորի Ավետարան» 1300—1307 թթ., Կալիֆոռնիայի համալսարանի գրադարան)

սրբուհի Աստուածածին Կոյսն էր՝ պարծանք ամենայն կուսից: Զորրորդ, վասն կերպի ողջունին... որ նշանակէ զուրախութիւն անմեղութեան, զի ողջ էր բնութեամբ: Եւ ասելն՝ **բերկրեալդ,** ցուցանէ զշնորհս բերկրալի կենցաղավարութեամբն: Եւ՝ **Տէրն ընդ քեզ,** զգերազանց յղութիւն. որ զՏէրն երկնի և երկրի յղացաւ և ծնաւ զԱստուած մարդացեալ»:

Ավետման տեսարանի պատկերագրական կերպը ծագում է Ղուկաս ավետարանչի հաղորդած պատմությունից և պարականոն երկերից, որոնք են՝ Հակոբ Տեառնեղբոր Ավետարանը, Հիսուսի Մանկության Ավետարանը և այլն:

Ավետումը պատկերող պահպանված հնագույն օրինակը գտնվում է Հռոմում՝ Պիրիսկիլլայի կատակոմբում (Գ—Դ դարեր)՝ ստորգետնյա տարածքում, ուր քրիստոնյաները ժամանակին պատսպարվել ու արարողություններ են կատարել: Այստեղ պահպանվել է գահավորակին նստած կնոջ՝ Մարիամի և նրա առաջ կանգնած պատանու՝ հրեշտակի պատկերը: 435 թ. հռոմեական մի խճանկար ներկայացնում է գահին նստած Աստվածամորը՝ ձեռքին իլիկ, կողքին՝ թևավոր հրեշտակներ:

Հայկական արվեստում Ավետման պատկերի վաղագույն նմուշը մեզ է հասել Զ դարից և գտնվում է «Էջմիածնի Ավետարանում»:

3 ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, Ավետում 1378 թ. (Ավետարան 1297 թ., ՄՄ № 7482)

Ավետման տեսարանի պատկերագրական և կոմպոզիցիոն հիմնական կառուցվածքը հետևյալն է. գործող անձինք են Աստծո պատգամաբեր Գաբրիել հրեշտակապետը, Մարիամ Աստվածածինը և երկրնքից դեպի Մարիամն իջնող Սուրբ Հոգին (հայկական մանրանկարներում հազվադեպ պատկերվում է նաև Հովսեփը)։ Գաբրիել հրեշտակապետը ներկայացվում է պատկերի ձախ կողմում, աջ ձեռքն օրհնության նշանով դեպի Մարիամն ուղղած, ձախում՝ գավազան, հաճախ ծաղկած գլխամասով (ուշ շրջանում նաև ծաղիկ՝ ըստ լատինական պատկերագրության ազդեցության)։ Պատկերագրական կանոնի համաձայն, հրեշտակները պատկերվում են պատանու տեսքով (հնագույն օրինակներում՝ երբեմն առանց թևերի), որը խորհրդանշում է ծաղկափթիթ կյանք, երկնային զորավոր ուժ։ Հրեշտակի ճակատին լինում է կարմիր նշան, ի հաստատումն նրա հրեղեն բնության, իսկ մանրանկարներում հաճախ նրա թևը դուրս է գալիս պատկերի շրջանակից, ստեղծելով ճախրանքի պատրանք, միաժամանակ ակնարկելով նրա առաքելության տիեզերական բնույթի մասին։ Ավետման տեսարանում

4 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, ԺԵ դ., Ավետում (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք, ձեռ. № 26)

Գաբրիել հրեշտակապետը պատկերվում է երկու հիմնական դիրքով՝ անշարժ (ստատիկ), և շարժուն՝ դեպի Մարիամը քայլ անող։ Ուշ շրջանի արևմտյան օրինակներում հրեշտակը պատկերվում է Աստվածամոր առաջ ծնկի իջած դիրքով։ ԺԴ—ԺԵ դդ. երբեմն հրեշտակը Մարիամին էր հանձնում մանուկ Հիսուսին, կամ գալարափաթեթ։

Մարիամ Աստվածածինը պատկերվում է հրեշտակապետի դիմաց՝ նկարի աջ մասում, իր ավանդական հագուստով (քիտոն, թիկնոց, գլխաշոր), երկու հիմնական դիրքով՝ նստած, կամ կանգնած։ 586 թ. «Ռաբուլայի Ավետարանում» (ասորական ձեռագիր), ինչպես և «Էջմիածնի Ավետարանում» Մարիամը պատկերված է կանգնած դիրքով։ Ե դարի երկրորդ կեսից Մարիամը պատկերվում է նաև Երուսաղեմյան աղբյուրի մոտ։ Նա ձեռքին ունենում է իլիկ, կամ սափոր (երբեմն դրանք բացակայում են)։ Մարիամի ձեռքերի դիրքը, շարժումը արտահայտում է երկյուղածություն, շփոթմունք, խոնարհություն, որը կապված է հրեշտակապետի անսպասելի հայտնվելու և իրեն վիճակ-

5 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, 1390 թ., Ավետում (Քլավելանդ, Սաշի հավաքածու)

ված սրբազան առաքելության հետ: Սակայն նրա ողջ կեցվածքն արտահայտում է հավատ և հոժարակամ հնազանդություն Աստծո կամքին, ըստ որի ինքը պետք է դառնա մարդկության Փրկչի՝ Աստծո Որդու մայրը՝ հղանալով Սուրբ Հոգուց: Վերջինս երկինքը խորհրդանշող կիսաշրջանից, լույսի շողի միջով ու աղավնու տեսքով, իջնում է դեպի Մարիամը: Արևմտյան օրինակներում պատկերվում է նաև Հայր Աստված, որից դեպի Մարիամն իջնող ճառագայթի մեջ երևում է Հիսուս մանկան փոքր պատկերը: Ռուսական իկոնաներում մանուկ Հիսուսին պատկերում են նաև Մարիամի կրծքի մոտ՝ սրտի խորանում:

Ավետման պատկերներում առկա հիմնական առարկայական խորհրդանշաններից են Հովսեփի տունը ներկայացնող ճարտարապետական կառույցը, Մարիամի գահավորակը՝ բարձով, իլիկը, կամ սափորը, աղբյուրը՝ ավազանով, տեսարանի կենտրոնում տեղադրված ծառը կամ վեմը:

Իլիկով տարբերակը ծագում է Հակոբ Տեառնեղբոր Ավետարանի գրական հիմքից, ըստ որի Մարիամը Երուսաղեմի տաճարի տասը կույսերից մեկն էր, որին հանձնարարված էր ծիրանի և կարմիր գույնի թել մանել տաճարի խորանի վարագույրի համար: Աղբյուրն ու սափորը մատնանշում են այն վայրը, ուր առաջին անգամ Մարիամը հանդիպեց Աստծո հրեշտակին, իսկ բուն ավետումը տեղի ունեցավ Հովսեփի տանը:

Ուշագրավ է աղբյուրի խորհրդաբանությունը, որը ներկայացվում

6 ՆԿԱՐԻՉ ԱԼԵՍԱՆԴՐՈ ԲՈՏԻՉԵԼԼԻ, Ավետում (Ֆլորենցիա, Ուֆիզի պատկերասրահ)

է մի քանի տարբերակով. կենաց ջուրը աղբյուրի ակից լցվում է սափորի մեջ՝ ջուրը խորհրդանշում է Հիսուսին, սափորը՝ Մարիամին: Երբեմն ջուրը բխում է երկու ակից, լցվելով լայնաբերան ավազանի մեջ՝ խորհրդանշելով երկու վտակից առաջացող Հորդանան գետը, ուր մկրտվեց Հիսուս, երկու կենարար ակները միաժամանակ նույնանում են Հին և Նոր Կտակարանների հետ, որոնք միատեղվում են, ինչպես Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունները:

Ոսկե սափորի խորհրդաբանությունը հին արմատներ ունի: Երբ Մովսեսը հրեաներին դուրս էր բերում Եգիպտոսից, անապատով անցնելիս կերակրվում էին երկնային աստվածատուր մանանայով, որը հետագայում նրանք պահում էին ոսկե սափորի մեջ, Աստծո տապանակում: Նույն ձևով էլ Հիսուս՝ Բանն Աստծո՝ պահվեց ոսկի սափորի՝ Աստվածամոր մեջ:

Մարիամի գահավորակը (բարձը), ցույց է տալիս նրա՝ Դավիթ թագավորի սերնդից լինելը: Այդ նույն սերնդից պետք է ելներ Քրիստոսը՝ երկնի ու երկրի թագավորը՝ Ամենակալը:

Ավետման տեսարանում պատկերվող ծառը և վեմը խորհրդանշում են մարգարեությունները Քրիստոսի ծննդյան մասին: Միաժամանակ ծառը խորհրդանշում է Հիսուսի խաչափայտը, որի վրա բարձրանալով, Նա քավեց մարդկության մեղքը: Ծառը նաև կրում է կորուսյալ դրախտի իմաստը. այն, ինչ կորցրեցին Ադամն ու Եվան, ետ բերեցին Հիսուսն ու Աստվածամայրը:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Բարբառ առետեաց ձայնիւ
Գաբրիէլ գոչէր սրրբուհւոյն.
— Առ քեզ առաքիմ, մաքուր
Պատրաստել տեղի տէրունւոյն:
Նըւագ ցնծութեան երգեմք.
— Ուրախ լե՛ր, բերկրեալ, Տէր ընդ քեզ:
Նորոգի երկիրս այսաւր
Յառաջին մեղաց հնութենէն
Երկինք երկնայնովք հանդերձ
Ընդ մարդկան տան փա՛ռք ի բարձունս,
Բամեալ միանան սիրով,
Հաշտութեամբ Հաւր ընդ արարածս:

ԾՆՈՒՆԴ

7 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ, Մոգերի երկրպագությունը (Ավետարան, 1268 թ., ՄՄ № 10785)

ԾՆՈՒՆԴ— ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՀԵՄՈՒՄ, ՀՈՎԻՎՆԵՐԻ ԵՎ ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ: Այս մասին, միմյանց լրացնելով, պատմում են Ղուկաս և Մատթեոս ավետարանիչները:

«Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար: ... Եվ բոլորը գնում էին արձանագրվելու մարդահամարի՝ յուրաքանչյուրն իր քաղաքում: Հովսեփն էլ Դավթի տնից և ազգից լինելով՝ Գալիլիայի Նազարեթ քաղաքից ելավ գնաց դեպի Հրեաստան՝ Դավթի քաղաքը, որը Բեթղեհեմ է կոչվում, մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանված էր և հղի էր: Եվ երբ նրանք այնտեղ հասան, նրա ծննդաբերելու օրերը լրացան և նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանում նրանց համար տեղ չկար:

Եվ այդ շրջանում բացօթյա բնակվող հովիվներ կային, որոնք իրենց հոտերի գիշերային պահակությունն էին անում: Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու նրանք սաստիկ վախեցան: Եվ հրեշտակը ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որը ամբողջ ժողովրդինը կլինի. որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է: Եվ սա՛ ձեզ համար նշան կլինի. խանձարուրով փաթաթած և մսուրի մեջ դրված մի մանուկ կգտնեք»: Եվ հանկարծակի այդ հրեշտակի հետ երևաց երկնային զորքերի մի բազմություն, որ օրհնում էր Աստծուն ու ասում. «Փա՜ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՜ւն և հաշտությո՜ւն մարդկանց մեջ»: Եվ երբ հրեշտակները նրանցից հեռանալով երկինք բարձրացան, հովիվներն ասացին միմյանց. «Եկեք գնանք մինչև Բեթղեհեմ և տեսնենք թե ի՛նչ բան է այս եղածը, որ Տերը մեզ ցույց տվեց»: Եվ նրանք շտապով եկան ու գտան Մարիամին ու Հովսեփին և մսուրի մեջ դրված մանկանը: Եվ ճանաչեցին նրան այն խոսքից, որ իրենց ասել էր մանկան մասին: Եվ բոլոր լսողները զարմանում էին այն բաների վրա, որ հովիվները ասացին իրենց: Իսկ Մարիամը այս բոլոր բաները պահում էր իր մեջ և իր սրտում խորհում...»:

ՂՈՒԿԱՍ Բ 1-20

Ս ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, ԺԲ դ., Ծնունդ (Պալերմո, Պալատինյան կապելլայի խճանկար)

«Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդես արքայի օրով, ահա արևելքից մոգեր եկան Երուսաղեմ և ասացին. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք արևելքում և եկանք նրան երկրպագելու»: Եվ երբ Հերովդես արքան լսեց այս, խռովվեց, նրա հետ՝ և ամբողջ Երուսաղեմը: Եվ հավաքելով բոլոր քահանայապետներին ու ժողովրդի դպիրներին՝ հարցրեց նրանց, թէ ո՞ւր պիտի ծնվի Քրիստոս: Եվ նրանք ասացին նրան. «Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, որովհետև մարգարեի միջոցով այսպես է գրված...»:

... Եվ ահա այն աստղը, որ տեսել էին արևելքում, առաջնորդեց նրանց (մոգերին-կազմ.) մինչև որ եկավ կանգնեց այն տեղի վրա, ուր մանուկն էր: Երբ աստղը տեսան, չափազանց ուրախացան: Եվ երբ այն տունը մտան, տեսան մանկանը իր մոր՝ Մարիամի հետ միասին և ընկան ու երկրպագեցին նրան. և բանալով իրենց գանձերը՝ նրան նվերներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս»:

ՄԱՏԹԵՈՍ Բ 1-6, 9-11

9 ՆԿԱՐԻՉ ՄՈՄԻԿ, Ծնունդ, («Պատերազմի Ավետարան», 1302 թ., ՄՄ № 6792)

«Եւ դու, ով Բեթլէհեմ եփրաթա, փոքր ես Յուդայի հազարավորների մէջ, սակայն քեզանից պիտի դուրս գայ ինձ համար Նա, որ իշխան լինի Իսրայէլին, եւ Նրա ելքը վաղուց՝ յաւիտենական օրերից է»:

ՄԻՔԻԱ Ե 2-3

Աստվածային նախախնամ գործերը տեսնող մարգարեի խոսքով՝ մարդկության օծյալ Փրկչի ծնունդը պետք է տեղի ունենար Բեթղեհեմ քաղաքում, որը, սուրբ հայրերի վկայությամբ, եբրայեցերեն նշանակում է հաց, հացի տուն, մարմին: Բեթղեհեմում ծնվեց Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոս և իր մարմնի չարչարմամբ ու արյան հեղմամբ լուծեց նախաստեղծների տիեզերակործան մահածին ախտը՝ Եվայի անհնազանդությունը և Ադամի հպարտությունը: Հիսուսի պատարագմամբ բժշկվեց և քավվեց մարդու ապականված հոգին և մարմինը: Բեթղեհեմում ծնվեց, քանզի Դավիթ թագավորի քաղաքն էր, որի սերնդից, ըստ մարգարեության, պետք է ելներ ճշմարիտ քահանայապետը և թագավորը երկնի ու երկրի, և ինչպես Դավիթը թագավորեց Երուսաղեմում, այնպես էլ Հիսուս եկավ սուրբ քաղաքը և խաչ բարձրացավ՝

10 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, ԺԳ դ., Մոգերի երկրպագությունը (Ախթալայի որմնանկարների հատված)

11 ՆԿԱՐԻՉ ԴՈՒՉՉՈ, Մոգերի երկրրպագությունը, 1308—1311 թթ. (Սիենա, Դել Դուոմո օպերա)

ի նշան հաշտության Աստծո և մարդկանց, հաստատելով Իր անանց արքայությունը՝ Վերին Երուսաղեմը:

Քրիստոնեական արվեստում Քրիստոսի ծննդյան տեսարանը պատկերող հնագույն նմուշները հանդիպում են Դ—Ե դարերի սարկոֆագների վրա և կատակոմբների որմնանկարներում (վաղագույն օրինակը՝ 320—323 թթ.): Հայ արվեստում ծննդյան հնագույն պատկերները մեզ են հասել Զ դարից: Դրանք են՝ Օձունի նշանավոր քարակոթողի հարթաքանդակը, «Էջմիածնի Ավետարանի» փղոսկրյա կազմի՝ ծնունդն ու մոգերի երկրպագությունը ներկայացնող դրվագները և նույն մատյանում զետեղված «Մոգերի երկրպագությունը» մանրանկարը:

Վրթանես Քերթողի վկայությամբ, ծննդյան պատկերներ են եղել մինչև Է դարի սկիզբները կառուցված հայկական եկեղեցիներում, իսկ պահպանված հնագույն որմնանկարչական պատկերը գտնվում է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում՝ 921 թ.: Ծննդյան տեսարանի ամենից տարածված կանոնիկ կոմպոզիցիան հետևյալն է. կենտրոնում Բեթղեհեմյան քարայրն է, որտեղ մսուրի վրա դրված է նորածին Հիսուս, մսուրից աջ Աստվածամայրն է, ձախ՝ գրաստը (եզը) և ավանակը: Վերնամասում հրեշտակաց դասն է, ավելի ցած՝ աջ և ձախ մասերում՝ մոգերը և հովիվները (վերջիններիս մոտ հաճախ պատկերվում են գառներ ու ոչխարներ): Պատկերի ստորին մասում աջից Հովսեփն է, իսկ

12 ՆԿԱՐԻՉ ՌՈԲԵՐ ԿԱՍՊԵՆ, Ծնունդ, մոտ. 1425 թ. (Դիժոնի գեղարվեստից թանգարան)

ձախից, որոշ դեպքերում՝ Եվան ու Սողոմեն, որոնք լայնաբերան ավազանի մեջ լվանում են մանուկ Հիսուսին (այս վերջին դրվագը ծագում է պարականոն ավետարաններից և հանդիպում է արդեն Ե դարում)։

Վաղ շրջանի պատկերներում (Դ դար) ծնունդը տեղի է ունենում ծածկի տակ։ Մսուրի մոտ Աստվածամայրն է՝ նստած, կամ կիսապառկած, մսուրի վրա Հիսուսն է, Նրանից ձախ՝ գրաստը և ավանակը։ Այս շրջանում Հովսեփը ներկայացվում է երիտասարդ տղամարդու տեսքով (օրինակ՝ «Ռաբուլայի Ավետարան»)։ Ավելի ուշ Հովսեփը պատկերվում էր տարեց մարդու արտաքինով, իսկ ծնունդը ներկայացվում էր քարանձավում։ Վաղ շրջանում երբեմն Մարիամն ու Հովսեփը պատկերվում են դեմ դիմաց նստած, կամ մսուրի երկու կողմերում։

Ծնունդը հաճախ ներկայացվում է թեմայի առանձին դրվագների ձևով, ինչպես, օրինակ՝ Մոգերի երկրպագությունը (ըստ Մատթեոսի), Հովիվների երկրպագությունը (ըստ Ղուկասի)։ Միաժամանակ տեղի է ունենում այս տեսարանների համատեղում՝ ծննդյան պատկերին ավելանում է մոգերի երկրպագության տեսարանը (Դ դար), հովիվների այցը և մանկան լոգանքի դրվագը։

Ծննդյան պատկերագրական տարբերակներում Տիրամայրը պատկերվում է նստած կամ կանգնած մսուրի մոտ (վաղ օրինակներում), կիսապառկած (սկսած Զ դարից), առաջ նայելիս, դիմահայաց, դեպի մանուկը շրջված կամ ծնրադիր։ ԺԲ—ԺԴ դարերում արևմտյան պատկերագրության մեջ Մարիամը ձեռքը մեկնում է Հիսուսին՝ խորհրդաբանորեն ընդգծելով Եկեղեցու (Աստվածամայր) միավորումը Քրիստոսի հետ։ Իսկ որոշ պատկերներում Մարիամը վերցնում է մանկանը, որպեսզի կերակրի։ Դրանով արտահայտվում են Աստվածամոր առաքինությունները։

Հովսեփը պատկերվում է նստած՝ ծնոտը ձեռքին հենած՝ խոհական դիրքով, իսկ երբեմն Հիսուսի կամ Աստվածամոր գլխավերևում՝ նրստած կամ կանգնած։ Նրա կերպարը ծննդյան պատկերագրության մեջ իր հաստատուն տեղն է գտնում սկսած Զ դարից։ ԺԴ—ԺԶ դարերում, հատկապես ռուսական իկոնաներում, Հովսեփը պատկերվում է կոճղի առաջ նստած, որից ճյուղ է բուսնել (Հեսսեի արմատ)։ ԺԴ դարի երկրորդ կեսից արևմտյան օրինակներում լայնորեն օգտագործվում է պատկերի մեկնաբանման կենցաղային մոտիվը, օրինակ՝ Հովսեփը ջուր է լցնում թասի մեջ, օգնելով մանկան լոգանքի արարողությանը, իսկ Մարիամը ձեռքով ստուգում է ջրի տաքությունը, կամ էլ Հովսեփը կերակուր է պատրաստում մոր և մանկան համար։

Ըստ ավանդության, մոգերը պատկերվում են թվով երեքը։ Նրանք կանգնած են, կամ ծնրադիր աղոթում են, իսկ արևմտյան օրինակներում նրանցից մեկը համբուրում է մանկան ոտքը։ Մոգերը կրում են

արքայական հանդերձներ, ձեռքներին պահում են նվերները՝ ոսկի, կնդրուկ (խունկ), զմուռս: Նրանք երբեմն պատկերվում են ձիերին հեծած, իսկ որոշ դեպքերում ձիերը պատկերվում են առանձին: Վաղ-պուրականի մանրանկարներում երբեմն մոգերի գլխավերևում գրվում է ավանդաբար պահպանված նրանց անունները՝ Մելքոն, Գասպար, Բաղդասար: Նրանցից մեկը երիտասարդ է, մյուսը՝ միջին տարիքի, երրորդը՝ տարեց:

Հովիվները պատկերվում են մեկը, երկուսը, կամ մի քանիսը՝ մահակներով, կամ առանց դրանց: Նրանց հագուստը լինում է կարճ կամ երկար, նաև մորթեղեն, երբեմն հիշեցնելով ճգնավորի խարազանազգեստ: Հովիվներից մեկը հաճախ սրինգ է նվագում: Հրեշտակները պատկերվում են կոմպոզիցիայի վերին մասում, հին օրինակներում նրանք լինում են երկուսը կամ չորսը, իսկ ԺԱ—ԺԲ դարերում նրանց թիվն ավելանում է: Որոշ դեպքերում հրեշտակների ձեռքին լինում է գալարափաթեթ, հազվադեպ պատկերվում են նաև սերովբեներ ու քերովբեներ:

Հրեշտակներից վեր, կենտրոնում Բեթղեհեմյան ուղեցույց աստղն է, որից իջնող շողերը հանգչում են մանուկ Հիսուսի խաչազարդ լուսապսակի բոլորակին: Եկեղեցական ավանդության մեջ աստղը համարվել է կերպավորված հրեշտակ, երբեմն էլ համեմատվել Սուրբ Հոգու հետ: Այն սկսել են պատկերել Դ դարից: Բեթղեհեմյան աստղը պատկերվում է խաչաձև, վեցթևյան (վեցօրյա արարչագործություն), յոթ թևանի (խորհրդանշում է Աստծո և արդարների հանգիստը), և ութ թևանի (խորհրդանշում է Քրիստոսի երկրորդ գալուստը՝ ութերորդ օր, Աստծո արքայությունը): Աստղից իջնող երեք շողերը խորհրդանշում են Սուրբ Երրորդությունը: Աստղը նաև վկան է այն գերբնական իրողության, որ Հիսուս միաժամանակ երկրի վրա է և երկնքում՝ Հոր մոտ:

Պատկերի կենտրոնական մասը զբաղեցնում են Հիսուս և Աստվածամայրը: Հիսուս պատկերվում է պառկած մսուրի վրա՝ փաթաթված խանձարուրով, մսուրից ձախ գրաստն ու ավանակն են, որոնք խորհրդանշում են համապատասխանաբար հրեաներին ու հեթանոսներին: Միաժամանակ գրաստը և հովիվները, ըստ Եկեղեցու հայրերի, խորհրդանշում են քահանայական ազգը և քահանաներին, իսկ ավանակը և մոգերը՝ հեթանոսներին ու հեթանոս արքաներին, որոնք գալով Հիսուսի մոտ՝ երկրպագում ու պատիվ են տալիս մանկանը՝ որպես համատիեզերական քահանայապետի և արքայի:

Մոգերի բերած ընծաները խորհրդանշում են. ոսկին՝ Հիսուսի իշխանական, արքայական տերությունը, կնդրուկը՝ նրա Աստված լինելը, զմուռսը՝ չարչարանքները, մահը և հարությունը:

13 ԲԱՍՍԱՆՈ (արվեստանոց), Հովիվների երկրպագությունը, ԺԷ դ. առաջին կես (Հայաստանի Ազգային պատկերասրահ)

Բեթղեհեմյան սուրբ այրը, ուր ծնվեց Հիսուս, հանդես է գալիս որպես տեսանելի խորան, սրբություն սրբոց, որտեղ կատարվում են աստվածային խորախորհուրդ հայտնությունները: Ըստ Եկեղեցու ավանդության, այդ այրում է թաղված եղել Եվան: Իսկ վերջինիս հայտնվելը մանկան լոգանքի դրվագում, ծագելով պարականոն ավետարանի գրական հիմքից, կապվում է Ադամի ու Եվայի, ու հանձինս նրանց՝ ողջ մարդկության փրկագործության հետ:

Նորածին Հիսուսով սրբագործված մսուրը խորհրդաբանորեն կերակրվելու տեղ է՝ քանզի սնվելով Քրիստոսի մարմնից, ժողովուրդները (գրաստ և ավանակ) ստացան ճշմարիտ հոգևոր գիտությունը, զոհասեղան է՝ որի վրա դրված է բանական զոհը, և գերեզման է (դժոխք), որի կապանքները՝ որպես խանձարուր (պատանք) վերցնելով իր վրա, քանդեց Հիսուս:

Աստվածամոր դիրքը և թիկնոցի ուսագլուխներին ու գլխաշորի

ճակատին պատկերված աստղերը խորհրդանշում են հրաշափառ՝ կուսությունը չխախտող ծնունդ: Կարմիր բարձը, որն առկա է Ծննդյան գրեթե բոլոր պատկերներում, թագավորական գահի իմաստն ունի:

Ի դեմս Հիսուսի ու Մարիամի, արծարծվում է նաև Ադամի և Եվայի խնդիրը. Հիսուս հանդես է գալիս որպես նոր Ադամ՝ նոր մարդ, և Մարիամը՝ որպես Աստծո կամքին հնազանդ նոր կին:

Հովսեփի կերպարը, որն իր դիրքով մեկուսի է, արտահայտում է խոհական վիճակ, քանզի նրա աչքի առաջ կատարվում են մարգարեությունները, մարդկության հետ Նոր Ուխտ է կնքվում:

Տերունական պատկերների շարքում Ծննդյան տեսարանին հաջորդում են Տեառնընդառաջը և Մկրտությունը: Հայ Առաքելական եկեղեցու դավանաբանության համաձայն, Ծննդյան և Մկրտության տոները նշվում են միաժամանակ՝ որպես Աստվածահայտնության տոն: Այս է պատճառը, որ հայկական շատ ձեռագրերում Ծննդյան տեսարանին անմիջապես հաջորդում է Մկրտությունը:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Ծընաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք,
Զի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ո՛չ մեկնելով ի Հօրէ՝
Ի սուրբ այրին բազմեցաւ:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

14 ՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԴՂԿԱՎԱՆԵՑԻ, Տեառնընդառաջ («Մողնու Ավետարան», ԺԱ դ. կեսեր, ՄՄ № 7736)

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ (ԸՆԾԱՑՈՒՄ ՏԱՃԱՐԻՆ)— ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵԿԱՆ ՀԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՃԱՐ, ՀԱՅՐ ԱՍՏԾՈՒՆ՝ ՏԻՐՈՋՆ ԸՆԴԱՌԱՋ: Այս մասին հաղորդում է Ղուկաս ավետարանիչը:

«... Մովսեսի օրենքի համաձայն Նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված է Տիրոջ օրենքում... Եվ Տիրոջ օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տալ մի զույգ տատրակ, կամ աղավնու երկու ձագ:

Արդ, Երուսաղեմում Սիմեոն անունով մի մարդ կար, և այդ մարդն արդար ու աստվածավախ էր և ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը. և Սուրբ Հոգին էր նրա մեջ: Եվ Սուրբ Հոգուց հրամայված էր իրեն մահ չտեսնել, մինչև որ տեսներ Տիրոջ Օծյալին: Նա Հոգով առաջնորդված եկավ տաճարը և երբ ծնողները բերին Հիսուս մանկանը՝ նրա վրա կատարելու, ինչ որ օրենքի սովորության համաձայն էր, Սիմեոնը նրան իր գիրկն առավ, օրհնեց Աստծուն և ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի. որովհետև աչքերս տեսան Քո փրկությունը, որը պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար»: Եվ Նրա հայրն ու մայրը զարմացած էին այն խոսքերի համար, որ ասում էին Նրա մասին: Սիմեոնը նրանց օրհնեց և ասաց նրա մորը՝ Մարիամին. «Ահա՛ սա Նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման և նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան»:

Եվ այնտեղ կար մի մարգարեուհի՝ Աննա անունով: ... Սա ևս նույն ժամին վեր կացավ եկավ, գոհություն էր մատուցում Տիրոջը և խոսում էր մանկան մասին բոլոր նրանց հետ, որոնք Երուսաղեմի փրկությանն էին սպասում»:

ՂՈՒԿԱՍ Բ 21-38

«Տեառնընդառաջ» տեսարանի հնագույն պատկերը հռոմեական խնանկար է (432—440 թթ.): Հայկական մանրանկարչության մեջ պատկերը պահպանվել է ԺԱ դարի մատյաններում՝ «Վեհափառի Ավետարան», «Մողնու Ավետարան» և այլն: Հատկանշական է, որ հնագույն ժամանակից սկսած պատկերի ավանդական կոմպոզիցիան գրեթե փոփոխություն չի կրել:



15 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՏԱ-ՐՈՆԱՑԻ, Տեառնընդառաջ (Ավետարան, 1328 թ., ՄՄ № 6289)

«Տեառնընդառաջի» պատկերագրական հիմնական կառույցը հետևյալն է. գործողությունը տեղի է ունենում ճարտարապետական կառույցի ներքո՝ Երուսաղեմի տաճարում: Պատկերի ձախ մասում մանկանը գրկած Մարիամն է, նրա թիկունքում՝ ձեռքին երկու տատրակ պահած Հովսեփը, աջ մասում՝ Սիմեոն ծերունին ու Աննա մարգարեուհին են: Կենտրոնում Երուսաղեմի տաճարի խորանն է, որի վարագույրը բաց է, կիսաբաց, կամ փակ: Հայկական որոշ մանրանկարներում խորանի վերնամասում խաչ է պատկերվում: Խորանի մեջ (սրբության սրբոց) հաճախ պատկերվում են ոսկե սափորն ու Ատծո Տապանակը:

Արևելյան վաղ օրինակներում Հովսեփն ու Աննան ներկայացվում են միասին, Սիմեոն ծերունու ետևում: Ավելի ուշ կերպարների դասավորությունը փոխվում է՝ Մարիամը, Հովսեփը և Աննան պատկերվում են մի կողմում, իսկ մանկանը գիրկն առած Սիմեոնը՝ հակառակ կողմում: Երբեմն մի կողմում Մարիամն ու Աննան են, մյուսում՝ Սի-

16 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Տեառնընդառաջ («Հեթումի մաշոց», 1286 թ., ՄՄ № 979)

մեոնն ու Հովսեփը, իսկ որոշ դեպքերում Հովսեփն ու Աննան բացակայում են:

Տեառնընդառաջի տեսարանում Հիսուս պատկերվում է Մարիամի կամ Սիմեոնի գրկում, որպես մանուկ (խանձարուրի մեջ) կամ երեխա, իսկ երբեմն՝ հասուն մարդու դեմքով: Շատ պատկերներ ներկայացնում են Հիսուսի՝ գրկից գիրկ հանձնման պահը: Որոշ օրինակներում Հիսուս Իր ոտքով գնում է դեպի Սիմեոն ծերունին, որը պարականոն գրվածքից է վերցված:

Ուշ շրջանի արվեստում Մարիամը Հիսուսին դնում է խորանի զոհասեղանին: ԺԴ—ԺԵ դարերի իտալական կերպարվեստում կան պատկերներ, ուր ներկայացվում է Սիմեոնի և Աննայի հանդիպումը, տատրակների զոհաբերումը և այլ փոփոխված մանրամասներ:

Մարիամն ու Հովսեփը ներկայացվում են ավանդական պատկերագրությամբ, Սիմեոնը՝ ճերմակամորուս ծերունու տեսքով, քահանայի

հանդերձով, աջ ձեռքը վեր պարզած (երբ մանուկը գրկին չէ), ձախում՝ գալարափաթեթ: Նույն շարժումները հատուկ են Աննա մարգարեուհուն, միայն թե նա երբեմն ձեռքին ունենում է բուրվառ կամ մոմ:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, Սիմեոնը (անունը թարգմանվում է՝ ունկընդրություն) խորհրդանշում է հրեական օրենքը, իսկ Աննան՝ Հին Ուխտի մարգարեներին, որոնք լռեցին Քրիստոսի գալստյամբ: Սիմեոնի՝ երկու ձեռքով մանկանը գրկելը խորհրդանշում է Հիսուսի միավորյալ մեկ բնությունը: Միաժամանակ Սիմեոնի ու Աննայի կերպարները զուգադրվում են Ադամի և Եվայի հետ և ի դեմս նրանց՝ մեղքերի թողություն էին հայցում Հիսուս Փրկչից:

Տատրակների կամ աղավնու ձագերի զոհաբերությունը Ս. Գրիգոր Տաթևացին մեկնաբանում է հետևյալ կերպ. «... յորժամ մորթեն զձագս նորա (աղավնու) և նա տեսանէ զարիւն ձագին, այլ ոչ հեռանայ տեղւոյն: Նոյնպես Քրիստոս հանապազօր տեսանէ զարիւն իւր հեղեալ ի վերայ խաչին վասն քրիստոնեից, այլ ոչ հեռանայ ի նոցանէ: Եւ Հայր Աստուած տեսանէ զարիւն միածնի Որդւոյ իւրոյ ի պատարագն սուրբ և հաշտի ընդ Եկեղեցի սուրբ և խնամէ և պահէ զնա...»:

Տեսարանի ընդհանուր իմաստային առանցքը Հիսուս Քրիստոսի՝ տաճար գալու իրողությունն է, որին ընդառաջ է դուրս գալիս Սիմեոն ծերունին՝ կերպավորելով հրեա ժողովրդի այն մասի ձգտումները, որոնք հոգով և սրտով անհամբեր սպասում էին Մեսիայի գալստյանը և Աստծո Արքայության հաստատմանը՝ ոչ ըստ իրենց կամքի ու ցանկության, այլ Աստծո կամեցողությամբ:

17 ՆԿԱՐԻՉ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ, Տեառնընդառաջ (Ավետարան, 1338 թ., ՄՄ № 4813)

ՇԱՐԱԿԱՆ (հատված)

Այսօր ի տաճարն եկեալ Կենարարն,
Եվ ի գիրկսն Սիմէօնի գրգռեցալ,
Զոր խընդութեամբ ընկալաւ Երուսաղէմ:

Այսօր երկիրս երկինք անուանեցան
Զի Տէրն տերաց իջեալ երկնից ի երկիր
Եվ ընծայիլ յանձն առնու ի գործոց ձեռաց իւրոց:

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար,
Եվ մարմնացար ի Սուրբ Կուսէ,
Զի վերստին նորոգեսցես զապականեալսն Ադամ:

Զգալուստ Քո Քրիստոս, այսօր յԵրուսաղէմ՝ Նոր Եկեղեցի,
Սուրբ յաղթական երգով բարեբանեմք,
Օրհնեա՛լ եկեալ անուամբ Տէառն:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

18 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, Մկրտություն (Ավետարան, 1323 թ., ՄՄ № 6289)

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ— ԵՐԵՍՆԱՄՅԱ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՐԴԱՆԱՆ ԳԵՏՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԻ ՁԵՌՔՈՎ: Մկրտության մասին պատմում են Մատթեոս, Մարկոս, Ղուկաս ավետարանիչները:

«Այն օրերին Հովհաննես Մկրտիչը գալիս է քարոզելու Հրեաստանի անապատում և ասում. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»: Սա՛ է նա, որի մասին Եսայի մարգարէի բերանով ասվեց. «Անապատում կանչողի ձայնն է, պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք նրա շավիղները»: Եվ ինքը՝ Հովհաննեսը, ուղտի մազից զգեստ ուներ և կաշվե գոտի իր մեջքին, իսկ նրա կերակուրն էր մորեխ ու վայրի մեղր: Այն ժամանակ նրա մոտ էին գնում բոլոր երուսաղեմացիները, ամբողջ Հրեաստանն ու Հորդանանի շրջակայքի ժողովուրդը և մկրտվում էին նրանից Հորդանան գետում և խոստովանում էին իրենց մեղքերը:...

Այն ժամանակ Հիսուս Գալիլիայից Հորդանան եկավ, Հովհաննեսի մոտ՝ նրանից մկրտվելու: Իսկ Հովհաննեսը արգելեց Նրան ու՛ ասաց. «Ի՛նձ պետք է, որ քեզնից մկրտվեմ, և դու ի՞նձ մոտ ես գալիս»: Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք կատարենք ամեն արդարություն»: Եվ ապա Նրան թույլ տվեց: Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ. և ահա երկինքը բացվեց Նրան, և Նա տեսավ Աստծո Հոգին, որն իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա: Եվ ահա մի ձայն երկնքից, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը»:

ՄԱՏԹԵՈՍ Գ 1-7, 13-17
տե՛ս նաև
ՄԱՐԿՈՍ Ա 9-11
ՂՈՒԿԱՍ Գ 21-22

«Դու ծովը պատառեցիր քո զորությունովը, վիշապների գլուխները փշրեցիր ջրերի մեջ»:
ՍԱՂՄՈՍ ՀԴ 13

Քրիստոնեական մշակույթում, համաձայն եկեղեցական ավանդության, ջուրը որպես խորհրդանիշ կարևոր տեղ է գրավում պատկերի կանոնացված համակարգում: Այն խորհրդանշում է արարչագործություն (ԾՆՆԴ. Ա 1—2): Ջուրը խորհրդանշել է նաև մարդու կողմից անկառավարելի տարերքը (համաշխարհային ջրհեղեղ) և մեղքի ու մահվան գաղափարը, դատնալով դեմոնական ուժերի բնակատեղի (անդրանիկ հրեշտակի [սատանա] անկումից հետո, երբ տիեզերքը զրկվեց իր նախնական կատարելությունից):

Եվ վերջապես, ջուրը մաքրագործման ու փրկագործման խորհուր-

19 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Ջ դ., Մկրտություն («Էջմիածնի Ավետարան», ՄՄ № 2374)

20 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Մկրտություն, մոտ. 1100 թ. (խրճանկար Դափնիի եկեղեցում)

դանիշն է, այս անգամ արդեն շնորհիվ Հիսուս Քրիստոսի Մկրտության, որն իջնելով Հորդանանի ջրերի մեջ, սրբացրեց այն, երկինքն իջեցնելով երկիր:

Հիսուսի Մկրտության վաղագույն պատկերները մեզ են հասել Բ—Գ դարերից, հայկական արվեստում՝ Դ—Ե դարերից՝ Թալինի և Օձունի քարակոթողների վրա, իսկ մանրանկարչության մեջ՝ «Էջմիածնի Ավետարանում» (Զ դար): Տեսարանի պատկերագրական ամենից տարածված տարբերակը հետևյալն է. պատկերի կենտրոնում Հիսուսն է, կանգնած Հորդանանի ջրերի մեջ, մինչև ուսագլուխները կամ գոտկատեղը ջրածածկ: Վաղ շրջանում Նա պատկերվում է պատանու տեսքով, ավելի ուշ՝ ավանդական արտաքինով, մերկ կամ կոնքակապով, մեկ կամ երկու ձեռքով օրհնելիս (արևմտյան ուշ օրինակներում՝ աղոթելիս): Ջրերի մեջ լինում են զանազան խորհրդանիշ պատկերներ:

Հորդանանի աջ ափին՝ պատկերի ձախ կողմում, ներկայացվում է Հովհաննես Մկրտիչը՝ իրեն բնորոշ արտաքինով՝ մորուքավոր ու երկար մազերով, մորթեղեն և կամ ճգնակյացի հագուստով; Նրա աջ ձեռքը հանգչում է Հիսուսի գլխի վրա, ձախը պարզված է դեպի երկինք: Արևմտյան պատկերներում նա խեցիով ջուր է լցնում Հիսուսի վրա: Վաղ շրջանում Հովհաննես Մկրտիչը և Հիսուս պատկերվում են Հորդանանի հակադիր ափերին կանգնած:

Գետի ձախ ափին, պատկերի աջ մասում ներկայացվում են Հի-

սուսի Մկրտության արարողությանն ապասարկող հրեշտակները, որոնց սկսել են պատկերել Ե—Զ դարերից: Նրանց ձեռքերին սրբիչներ և հանդերձներ են, երբեմն նաև յուղի սրվակներ:

Պատկերի վերին մասում Աստծո Աջն է, որից բխող աղավնակերպ Սուրբ Հոգին գլխիվայր իջնում է դեպի Հիսուս: Արևմտյան որոշ օրինակներում Նա սրվակից մյուռոն է լցնում Հիսուսի գլխին: Ավելի ուշ շրջանում աղավնին պատկերվում է սավառնելիս, իսկ Աստծո Աջին փոխարինում է դրախտի դռների և Աստծո գահի պատկերը:

Հորդանանի ափերը պատկերվում են բլրապատ կամ ժայռապատ, հաճախ գետափին լինում է ծառ, որի բնին կամ արմատին կացին է դրված, արտահայտելով Հովհաննես Մկրտչի՝ հրեաներին ուղղված խոսքերը՝ «... կացինն ահա ծառերի արմատին է դրված...» (Մատթեոս, Գ. 10—11): Հորդանանի ջուրը ներկայացվում է խիստ ոճավորված:

Մկրտության տեսարանը հարուստ է խորհրդանշաններով: Առաջին անգամ այստեղ է Սուրբ Երրորդությունը պատկերվում երեք անձերով՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Վերջինիս աղավնակերպ լինելը Ս. Գրիգոր Լուսավորիչը բացատրում է հետևյալ կերպ. «... որպեսզի տեսնողներին ուսուցանի, թե չկա ոչ մի այլ հնար՝ մոտենալու Աստվածորդուն, եթե ոչ անմեղությամբ, արդարությամբ ու սրբությամբ...»:

Հորդանանի ջրերում պատկերվում է ծերունու տեսքով մերկ մարդ, թևի տակ սափոր (երբեմն փող փչելիս): Այս կերպարը արվեստաբանական գրականության մեջ կոչվում է «Հորդանանի արքա»: Սա սատանայի գեղարվեստական կերպավորումներից մեկն է: Այդ է պատճառը, որ հաճախ պատկերվում է մեջքը Հիսուսին արած՝ փախչելիս:

21 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Մկրտություն (ձեռագիր 975—980 թթ., Վինչեստր, Դեվոնշիրի հավաքածու)

22 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ, Մկրտություն (Ավետարան, 1268 թ., ՄՄ № 10675)

23 ՆԿԱՐԻՉ ՊԵՏՐՈ ԴԵԼԼԱ ՖՐԱՆՉԵՍԿԱ, Մկրտություն, ԺԵ դ.

Նույն իմաստն է կրում Քրիստոսի ոտքերի տակ պատկերված վիշապը, որի օձագալար մարմինը կապ է գցված:

Հորդանանի մեջ պատկերվում են նաև ձկներ, որոնք խորհրդանշում են մարդկանց փրկագնված հոգիները: Երբեմն պատկերվում են նաև Հովհաննես Մկրտչի աշակերտները:

Խաչի կամ խաչակոթողի առկայությունն այս տեսարանում (ջրի մեջ կամ գետափին), կրում է Հիսուսի քարոզչության ու խաչելության գաղափարը: Ս. Գրիգոր Տաթևացին, անդրադառնալով Մկրտության խորհրդին գրում է, թե ինչպես Հեսուն հրեաներին Հորդանանով անցկացրեց ավետյաց երկիր, այնպես էլ Քրիստոս իր մկրտությամբ ժողովրդին անցկացրեց երկնքի արքայություն:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցում Աստվածահայտնության տոնի օրը Քրիստոսի Մկրտությունը հիշատակվում է Ջրօրհնեքի արարողությամբ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԻ

Այսօր ձայնն Հայրական
Յերկնից իջեալ հաճոյական,
Սիրեցելոյ Որդւոյն վկայ.
Այ յորդորէ՛, գետ յորդորէ՛
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր Սուրբ Հոգին իջեալ
Աղաւնակերպ և նիւթեղեն,
Հրեղէն լեզուօք յայտնեալ ի քեզ
Սուրբ Յորդանան.
Այ յորդորէ՛, գետ յորդորէ՛
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր Կարապետն Յովհաննէս,
Խայտար, ցնծայր, տեսանելով
Զաստուածորդին իջմամբ ի ջուրն,
Այ յորդորէ՛, գետ յորդորէ՛
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

24 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Պայծառակերպություն («Կեռան թագուհու Ավետարան» 1272 թ., Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, № 2568)

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)— ՀԻՍՈՒՍԻ՝ ԵՐԵՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԹԱԲՈՐ ԼԵՌԱՆ ԳԱԳԱԹԸ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ ԵՎ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՎԵԼԸ: Այս մասին հաղորդում են Մատթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարանիչները:

«... Հիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին և նրանց հանեց առանձին, մի բարձր լեռ և նրանց առաջ կերպարանափոխվեց. և Նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. և Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը: Եվ ահա նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին Նրա հետ: Պետրոսը պատասխան տվեց և ասաց Հիսուսին. «Տե՛ր, լավ է որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք, մեկը՝ Քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի»: Եվ մինչ նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրա՛ն լսեցեք»: Երբ աշակերտներն այս լսեցին, իրենց երեսի վրա ընկան և սաստիկ վախեցան: Եվ Հիսուս մոտենալով, դիպավ նրանց ու ասաց. «Ոտքի ելեք և մի՛ վախեցեք»: Նրանք աչքերը բարձրացրին և Հիսուսից բացի ոչ որի չտեսան:

Եվ մինչ լեռից իջնում էին, Հիսուս նրանց պատվիրեց ու ասաց. «Այդ տեսիլքը մարդու չասեք, մինչև որ մարդու Որդին մեռելներից հարություն առնի»: Աշակերտները Նրան հարցրին ու ասացին. «Հապա ինչո՞ւ դպիրներն ասում են, թե նախ Եղիան պիտի գա»: Հիսուս պատասխանեց և ասաց նրանց. «Եղիան կգա և կվերահաստատի ամեն ինչ. բայց ձեզ ասում եմ, որ Եղիան արդեն իսկ եկել է. բայց նրան չճանաչեցին, այլ ինչ որ կամեցան, արեցին նրան. նույնպես և մարդու Որդին նրանց ձեռքով չարչարվելու է»: Այն ժամանակ աշակերտները հասկացան, թե Հովհաննես Մկրտչի մասին էր ասել իրենց»:

ՄԱՏԹԵՈՍ ԺԷ 1-13 տե՛ս նաև **ՄԱՐԿՈՍ Թ 1-12 ՂՈՒԿԱՍ Թ 28-36**

«... ականատես եղանք Նրա
մեծութեանը, քանի որ Նա
Հայր Աստծուց ստացաւ փառք
եւ պատիւ, երբ մեծավայելուչ
փառքից եկաւ այս խօսքը, թէ՝
«Դա է իմ սիրելի որդին, որն
ունի իմ ամբողջ հաճութիւնը»:
Եւ երկնքից եկող այս ձայնը
լսեցինք մենք իսկ, որ Նրա
հետ էինք սուրբ լեռան վրայ»

Բ. ՊԵՏՐՈՍ, Ա, 16—18



25 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ. Պայծառակերպություն (Ավետարան, ԺԱ դ., Բամբերգ, Սթատլիշ գրադարան)

Աստվածատեսության խորհրդի դրսևորումներից մեկը տեղի ունեցավ Թաբոր լեռան վրա Հիսուս Քրիստոսի Պայծառակերպմամբ (Այլակերպություն)։ Պայծառակերպության խորհրդին ներկա էին Մովսես և Եղիա մարգարեները, Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալները։

Լեռան վրա Աստծո Որդին հայտնեց աշակերտներին Իր աստվածային էության անանց փառքը, այնչափ, որչափ կարող էր դիմանալ մարդկային հողաշեն մարմնի մեղավոր բնությունը՝ Սրբության զորավոր ճառագմանը։ Թաբոր լեռան վրա Հայր Աստված մեկ անգամ ևս ծանուցեց մարդկանց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, դրա՛ն լսեցեք»։

Քրիստոնեական արվեստում Պայծառակերպության հնագույն պատկերները հայտնի են Զ դարից։ Հայկական արվեստում դա Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարն է (921 թ.), իսկ մանրանկարչության մեջ Պայծառակերպության տեսարանի մեզ հասած առաջին պատկերները զետեղված են ԺԱ դարի նկարազարդ Ավետարաններում։

Վաղ շրջանի համաքրիստոնեական հուշարձաններում հայտնի են

26 ՆԿԱՐԻՉ ՄՈՄԻԿ, Պայծառակերպություն («Պատերազմի Ավետարան», 1302 թ., ՄՄ № 6792)

Պայծառակերպության տեսարանի երկու կոմպոզիցիոն տարբերակ, որոնցից առաջինը ներկայացնում է տեսարանի գեղարվեստական մեկնաբանման խորհրդաբանական (549 թ.), իսկ երկրորդը՝ խորհրդաբանական-պատմողական նկարագիրը (550 թ.): Առաջին տարբերակում պատկերի վերին մասում Հայր Աստծո Աջի ներքո խորհրդավոր շրջանն է՝ շրջապատված աստղերով (ներկայացնում է Աստվածության Փառքը), որի մեջ պատկերված է իսաչ (խորհրդանշում է Հիսուսին), իսկ Եղիան և Մովսեսը պատկերված են ոչ թե ամբողջ հասակով, այլ՝ միայն գոտկատեղից վեր: Ստորին մասում Թաբոր լեռն է և երեք գառներ, որոնք խորհրդանշում են Հիսուսի առաքյալներին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին: Երկրորդ տարբերակը ներկայացնում է Պայծառակերպության տեսարանը հետևյալ կերպ՝ Հիսուս Փառքի մեջ,

Եղիան և Մովսեսը՝ ողջ հասակով Նրա երկու կողմերում կանգնած, Թաբոր լեռը և ստորին մասում՝ Պետրոսը, Հակոբոսը, Հովհաննեսը: Երբեմն պատկերվում են հարակից տեսարաններ՝ լեռ բարձրանալը, լեռից իջնելը, Հիսուսի զրույցն աշակերտների հետ:

Տերունական պատկերներում, մասնավորապես Պայծառակերպության տեսարանում, պատկերի կոմպոզիցիոն և գաղափարական առանցքը Հիսուս Քրիստոսի կերպարն է, որի շուրջ խմբված են (թե՛ իրենց դասավորությամբ, թե՛ զուտ իմաստային կապով) մնացած գործող անձինք և պատկերի խորհրդաբանական կողմը լրացնող՝ ամբողջացնող առարկայական խորհրդանշանները: Այս տեսարանում Հիսուս պատկերվում է մանդորլայի մեջ կանգնած Իր ավանդական տեսքով և հագուստով: Մանդորլան արտացոլում է Աստվածության Փառքը և Նրա Եռեակ միությունը (վերջինս արտահայտվում է մանդորլայի գունային եռամաս բաժանմամբ): Իր ձևով մանդորլան լինում է կլոր կամ ձվածիր: Որոշ օրինակներում Հիսուս ներկայացվում է անմորուք պատանու տեսքով, հագին ճերմակաթույր քիտոն, որով ընդգծվում է նրա այլակերպությունը: Արևմտյան արվեստում Հիսուս ներկայացվում է գետնից կտրված:

Մովսես և Եղիա մարգարեները պատկերվում են Հիսուսից աջ և ձախ կանգնած (երբեմն՝ հակառակ դասավորությամբ): Մովսեսը երիտասարդ է, Եղիան՝ ծեր, վաղ օրինակներում Մովսեսի ձեռքին գիրք է պատկերված, ավելի ուշ գրքին փոխարինում են օրենքի տախտակները: Ռուսական օրինակներում Մովսեսին և Եղիային Թաբոր լեռ են



27 ՆԿԱՐԻՉ ՀՈՎՍԻԱՆ, Պայծառակերպություն (Ավետարան, 1306 թ., ՄՄ № 4806)



28 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ. Պայծառակերպություն (Ավետարան, 1265 թ., Երուսաղեմ, Սբրոց Հակոբյանց վանք, № 1956)

բերում հրեշտակները, իսկ արևմտյան օրինակներում երբեմն մարգարեները ծնկած աղոթում են: Ըստ Եկեղեցու հայրերի՝ Եղիան և Մովսեսը Պայծառակերպության խորհրդի մեջ համապատասխանաբար ներկայացնում են երկինքը և երկիրը, կենդանին և մահացածը, կանգնելով Հիսուսի կողքին, վկայում են, որ Նա է Տերը, «կենդանեաց եւ մեռելոց» և Աստվածը՝ «երկնի եւ երկրի», արարիչը՝ նոր կյանքի, միավորողը և մաքրագործողը տեսանելի և անտեսանելի աշխարհի: Աստված Եղիային հոգով և մարմնով տարավ երկինք, իսկ Մովսեսը մահացավ և թաղվեց երկրում, այդ պատճառով էլ մանրանկարներում երբեմն Մովսեսը փաթաթված է պատանքով, որը մահվան գաղափարի կրողն է: Որոշ պատկերներում Եղիան և Մովսեսը խնդրարկուի դիրքով ձեռքերը պարզել են դեպի Հիսուս Փրկիչը կամ օրհնում են նրան:

Հիսուսի ոտքերի տակ Թաբոր լեռն է, որը պատկերվում է խիստ ոճավորված կամ էլ չի պատկերվում: Ավելի ցած երեք աշակերտներն են, որոնք հիմնականում ներկայացվում են երկու պատկերագրական

29 ՆԿԱՐԻՉ ԴՈՒՉՉՈ, Պայծառակերպություն (Լոնդոնի Ազգային պատկերասրահ)



տարբերակով՝ աստվածատեսական (երբ Աստծո անսպասելի հայտնությունից աշակերտները շփոթվում են, երկյուղում ու զարհուրում, որն արտահայտվում է նրանց մարմնի դիրքով՝ ընկած, ընկնելիս, ձեռքերով դեմքերը ծածկած և այլն) և աստվածապաշտական (երբ աշակերտները պատկերվում են ծնրադիր աղոթքի պահին)։ Արևմտյան օրինակներում առաքյալները ներկայացվում են նաև քնած կամ անգիտակից վիճակում։

Պայծառակերպության խորհուրդը արծարծում է նաև ադամական մարմնի խնդիրը, որի հետաքրքիր մեկնաբանությունը տալիս է Գրիգոր Տաթևացին. «... խորհէին առաքեալքն, թե՝ այն լուսեղէն զգեստն, որ առաւ յԱդամայ՝ վերստին տալոց է ի նա, թէ ոչ, վասն որոյ պայծառակերպեցաւ եւ եցոյց յինքեան, թէ որդի եղեւ ըստ բնութեան Ադամայ եւ վերստին էառ բնութեամբ զնոյն զգեստն»։

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Պայծառակերպության տոնը նշում է նաև Վարդավառ անվանումով։

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Աստանաւր տեսիլ աճեղ ի լեառըն Թաբաւր,
ԶՈրդին Աստուծոյ տեսեալ ի նմա խոնարհեաւ։

Երիցս երանեալ արամբք հինգ գըլխաւորաւք,
Զ Պետրոս՝ վէմըն հաւատոյ, զորդիսն Որոտման։

Զտըւողն աւրինաց Մովսէս, զմեծըն յԵղիաս,
Զմարգարէսն ի մէջ ածեալ պատմիչ խորհրդոյ։

Դաւիթ վաղընջուց ձայնեալ զայս աւուր խորհուրդ,
Նախագուշակեալ ասէր զցընծութիւն աւուրս։

Ցընծալով ցընծա՛, Թաբաւր, հանդերձ Հերմոնիւ,
ԶՏէր տեսեալ ի քեզ փայլեալ հայրական փառաւք։

Հայր վըկայելով յամպոյն. Դա՛ է իմ Որդի,
Դըմա՛ լըւարուք, ասէ, ընդ որ հաճեցայ։

Մի՛ ոք կարծեսցէ ըզդա նըման Մովսեսի,
Եղիա ըզդա մի՛ ասէք, ըզՏէրդ Եղիայի.

Յովհաննու դա չէ հանգոյն, անտես ի վերնոցն,
Ի՛մ է սիրելի Որդի՝ Հաւրս երկնաւորի։

ՄՈՒՏՔ ԵՐՈՒՍԱՂԵՄ

30 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Մուտք Երուսաղեմ («Հեթում մի Ճաշոց», 1286 թ., ՄՄ № 979)

ՄՈՒՏՔ ԵՐՈՒՍԱՂԵՄ— ՁԱՏԿԻՑ ՄԵԿ ՇԱԲԱԹ ԱՌԱՋ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԳԱԼԸ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԻՍԱՎՈՐԱՊԵՍ ՔԱՂԱՔ ՄՏՆԵԼԸ: Այս մասին պատմում են բոլոր չորս ավետարանիչները:

«Երբ Երուսաղեմին մոտեցան և եկան Բեթփագե, Ձիթենյաց լեռան մոտ, այն ժամանակ Հիսուս Իր աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց. «Գնացեք այդ գյուղը, որ ձեր դիմացն է և այնտեղ կգտնեք կապված մի էշ և նրա հետ՝ մի քուռակ. արձակեցե՛ք բերեք ինձ: Եվ եթե ձեզ մեկը բան ասի, կասեք, որ իրենց տիրոջը պետք են. և նա իսկույն դրանք կուղարկի»: Բայց այս բոլորը եղավ, որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. «Ասացե՛ք Սիոնի դստերը, ահա գալիս է քո թագավորը՝ հեզ և նստած էշի ու էշի քուռակի վրա»: Աշակերտները գնացին և արեցին, ինչպես Հիսուս իրենց հրամայել էր. և էշն ու քուռակը բերեցին, նրանց վրա զգեստներ գցեցին. և Նա նստեց նրանց վրա: Եվ բազում ժողովուրդ իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրա, իսկ ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում ու սփռում ճանապարհի վրա: Առաջից և ետևից գնացող ժողովրդի բազմությունը աղաղակում էր ու ասում. «Օրհնությո՛ւն Դավթի Որդուն, օրհնյա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով. օրհնությո՛ւն բարձունքներում»:

Եվ երբ Նա մտավ Երուսաղեմ, ամբողջ քաղաքը դղրդաց, և ասում էին՝ ո՞վ է սա: Իսկ ժողովրդի բազմությունն ասում էր. «Սա Հիսուս մարգարեն է, որ Գալիլիայի Նազարեթ քաղաքից է»:

ՄԱՏԹԵՈՍ ԻԱ 1-11
տե՛ս նաև
ՄԱՐԿՈՍ ԺԱ 1-11,
ՂՈՒԿԱՍ ԺԹ 29-38,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԺԲ 12-19

Հիսուս Քրիստոսի երկրային առաքելության գլխավոր և վերջին իրադարձությունները ծավալվում են Երուսաղեմում: Զատկի տոնի նախօրեին Նա աշակերտների հետ Ձիթենյաց լեռան կողմից մոտենում է քաղաքին, բայց մինչ այնտեղ հասնելը աշակերտներից երկուսին ուղարկում է մոտակա Բեթփագե կոչվող գյուղը նրանց պատվիրելով այնտեղից բերել փողոցում կապված մի ավանակ, որի վրա ոչ ոք դեռ չի նստել: Աշակերտները ճշտորեն կատարում են իրենց ասվածը, ապա ուսուցչին նստեցնում են ավանակի վրա ու շարժվում դեպի քաղաք: Ժողովուրդը դիմավորում է Հիսուսին, շատերը հագուստներ են փռում ճանապարհին, ուրիշներն արմավենու ճյուղեր են կտրատում ու նետում թափորի ոտքերի տակ:

31 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, ԺԲ դ., Մուտք Երուսաղեմ (Պալերմո, Պալատինյան կապելլա, խճանկար)

Հիսուսի այս հանդիսավոր մուտքը Երուսաղեմ քրիստոնեական արվեստում պատկերվում է դեռևս Դ—Ե դարերի հուշարձաններում: Դրանցից վաղագույնը Յունիուս-Բասսիուսի սարկոֆագն է՝ 359 թ.: Հայկական արվեստում հայտնի հնագույն օրինակը պահպանվել է «Էջմիածնի Ավետարանի» Զ դարի փղոսկրե դրվագազարդ կազմի վրա: Մանրանկարչության մեջ սույն թեմայով կատարված առաջին պատկերը գտնվում է «Ռաբուլայի Ավետարանում», իսկ հայկական հնագույն պատկերազարդ մատյաններից մեկում՝ ԺԱ դարի սկզբների «Վեհափառի Ավետարանում» (ՄՄ № 10780) տեսարանը պատկերված է երկու անգամ, Մատթեոսի և Մարկոսի ավետարանների համապատասխան մասերում: Ուշագրավ են հատկապես ԺԳ դարի ձեռագրերում առկա պատկերները, որոնցում աստիճանաբար հարստանում ու կատարելագործվում են գեղարվեստական ձևերը, բայց պատկերագրական սկզբունքները գրեթե չեն փոխվում:

32 ՆԿԱՐԻՉ ԹՈՒՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, Մուտք Երուսաղեմ (Ավետարան, 1323 թ., ՄՄՄ № 6289)

Մուտք Երուսաղեմ տեսարանը ներկայացվում է հիմնականում հետևյալ կառուցվածքով. կենտրոնում պատկերվում է ավանակի վրա նստած, քաղաքին մոտեցող Քրիստոս, օրհնող աջը բարձրացրած: Մյուս ձեռքում երբեմն պահում է գալարափաթեթ կամ գիրք: Նրան հետևում են աշակերտները՝ տասներկուսը կամ երկուսը, իսկ առջևում Երուսաղեմի բնակիչներն են, որոնք հագուստներ ու ծառերից կտրած ճյուղեր են նետում ճանապարհին: Երուսաղեմը ներկայացվում է պարսպապատ քաղաքի կամ տաճարի պատկերով: Արևմտյան ուշ օրինակներում ավելանում են կենցաղային մանրամասներ, քաղաքային ընդարձակ բնանկար և այլն:

Այս տեսարանի պատկերագրության որոշ տարբերություններ կապվում են տարբեր ավետարաններում եղած մանրամասների հետ:

33 ՆԿԱՐԻՉ ՄԱՐԳԱՐԵ, Մուտք Երուսաղեմ («Հաղթատի Ավետարան», 1211 թ., ՄՄ № 6288)

Ըստ Մատթեոսի, Քրիստոս պատվիրում է, որ բերեն էշը և քուռակը, «որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. «Ասացեք Սիոնի դստերը, ահա գալիս է քո թագավորը՝ հեզ և նստած է էշի ու էշի քուռակի վրա»: Որոշ մանրանկարներում հենց այդպես էլ պատկերվում է՝ Քրիստոս նստած է էշին, իսկ կողքից գալիս է քուռակը, իսկ երբեմն այս վերջինի վրա են դրված լինում Հիսուսի ոտքերը (ըստ Ս. Գրիգոր Տաթևացու այս դրվագում էշը խորհրդանշում է հրեաներին, քուռակը՝ հեթանոսներին): Մյուս երեք ավետարաններում քուռակը չի հիշատակվում:

Մատթեոսի ու Մարկոսի համաձայն՝ ոստեր կտրատելու համար ծառ են բարձրանում քաղաքի բնակիչներից ոմանք, իսկ ըստ Ղուկասի, այդ անում է Զաքեոս կարճահասակը՝ Քրիստոսին տեսնելու համար,

բայց ոչ թե Երուսաղեմում, այլ նախքան այդտեղ հասնելը՝ Երիքովում (Ղուկաս ԺԹ 1—7)։ Սակայն մանրանկարներում երբեմն Զաքեոսը պատկերվում է Մուտք Երուսաղեմ տեսարանում, ծառի վրա (կից գրված է լինում նրա անունը)։ Կիլիկյան որոշ օրինակներում պատկերվում է նաև աշակերտների՝ ավանակը բերելու դրվագը։

Տարբեր ժամանակներում նկարիչների կատարած նորամուծությունները հիմնականում արտաքին բնույթ են կրել (ավելացվել են ճարտարապետական կառույցներ, մեծացվել է դիմավորողների թիվը և այլն), բայց բուն տեսարանի կոմպոզիցիոն հիմնական կառուցվածքը մնացել է անփոփոխ։ Միաժամանակ արվեստագետներից ոմանք Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, որպես նոր թագավորի գալուստ, ներկայացրել են իբրև ժողովրդական տոնախմբություն հիշեցնող ուրախ ու

34 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Մուտք Երուսաղեմ («Ակների Ավետարան», 1287 թ., ՄՄ № 197)

35 ՆԿԱՐԻՉՆԵՐ ԹՈՐՈՍ ՏԱ-ՐՈՆԱՑԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ, Մուտք Երուսաղեմ («Գլաձորի Ավետարան», 1300—1307 թթ., Կալիֆորնիայի համալսարանի գրադարան)

ջերմ ընդունելություն (օրինակ՝ «Հաղբատի Ավետարան» 1211 թ., ՄՄ № 6288)։ Մյուսները շեշտել են պահի խորհրդավորությունը, պատկերել սրբազան երթ, ուր նկատվում է Երուսաղեմում Քրիստոսին ընպասվող տանջանքների ու եղերական մահվան կանխազգացումը։

Պատկերի խորհրդաբանական կողմին անդրադառնալով, հարկ է նշել Քրիստոսի՝ ավանակի վրա նստելու հանգամանքը, որպես խոնարհության ու ժողովրդականության, նաև խաղաղասիրության (Զաք. Թ. 9—10) արտահայտություն, ճանապարհին հագուստներ փռելը՝ վարդապետին պատիվ մատուցելու եղանակ։ Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, դա նշանակում է նաև մերկանալ մեղքի հանդերձից և խոստովանությամբ այն տարածել Տիրոջ ոտքերի տակ, որ նա տրորելով ջնջի այն ու ճշմարիտ ճանապարհ ցույց տա։ Զիթենու և արմավենու դալար ոստերի կտրատումը, կապված հնավանդ սովորությունների հետ, բազմիմաստ է, բայց հիշյալ տեսարանում առաջին հերթին խորհրդանշում է «Հաղթող թագավորի» գալստյան իրողությունը։

«Մուտք Երուսաղեմի» տոնը եկեղեցին նշում է զատկից մեկ շաբաթ առաջ: Այն համընկնում է գարնան գալու, բնության զարթոնքի հետ: Հայաստանյաց Առաքելական Եկեղեցում տոնի անվանումն է Ծաղկազարդ, երբեմն այն կոչվում է նաև ծառզարդար, կամ արմավենյաց օր:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

Զգալուստ Քո, Քրիստոս, այսօր
Ցերուսաղէմ՝ նոր եկեղեցի սուրբ,
Ցաղթական երգով բարեբանեմք՝
Օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն:

Որ վասն մերոյ փրկութեան՝
Ցաւանակի նստիլ յանձն առեր.
Ընդ մանկունսն բարեբանեմք՝
Օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն:

Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի Քո անշա՛րժ պահեա
Եւ զերկրպագուս անուանդ քում
Պահեա ի խաղաղութեան:

36 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Ռուսկվա (Ավետարան, ԺԳ դ., ՄՄ № 9422)

ՈՏՆԼԿԱ



ՈՏՆԼՎԱ— ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՏՔԵՐԸ ԼՎԱՆԱԼԸ: Այս մասին գրում է Հովհաննես ավետարանիչը:

«Զատկի տոնից առաջ Հիսուս իմացավ, որ հասել է Իր ժամը, որպեսզի այս աշխարհից Հոր մոտ փոխադրվի. սիրեց յուրայիններին, որ այս աշխարհում են, իսպառ սիրեց նրանց: Եվ ընթրիքի ժամանակ, երբ սատանան արդեն իսկ Սիմոնի որդի Իսկարիովտացի Հուդայի սրտի մեջ դրել էր, որ մատնի Նրան, Հիսուս իմացավ, որ Հայրն ամեն բան Իր ձեռքն էր հանձնել, և որ Ինքն Աստծուց էր ելել և Աստծո մոտ էր գնում: Նա վեր կացավ ընթրիքից, մի կողմ դրեց զգեստները և մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: Եվ ապա ջուր վերցնելով՝ լցրեց կոնքի մեջ և սկսեց Իր աշակերտների ոտքերը լվանալ և սրբել մեջքին կապած սրբիչով: Մոտեցավ Սիմոն Պետրոսին, և սա ասաց Նրան. «Տե՛ր, Դո՞ւ ես իմ ոտքերը լվանում»: Հիսուս պատասխանեց նրան ու ասաց. «Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց հետո կիմանաս»: Պետրոսը նրան ասաց. «Իմ ոտքերը հավիտյան չես լվանա»: Հիսուս պատասխանեց. «Եթե քեզ չլվանամ, ինձ հետ մաս չունես»: Սիմոն Պետրոսն ասաց նրան. «Տե՛ր, ոչ թե միայն իմ ոտքերը, այլև իմ ձեռքերն ու գլուխն էլ լվա»: Հիսուս նրան ասաց. «Լվացվածին ուրիշ բան պետք չէ, բայց միայն ոտքերը լվանալ, քանի որ ամբողջությամբ մաքուր է. և դուք մաքուր եք, բայց ոչ բոլորդ»: Քանի որ Նա գիտեր նրան, ով Իրեն մատնելու էր, դրա համար ասաց. «Բոլորդ չէ, որ մաքուր եք»: Եվ երբ նրանց ոտքերը լվաց, վերցրեց Իր զգեստները և դարձյալ սեղան նստեց ու ասաց նրանց. «Գիտե՞ք, թե այդ ինչ արեցի ձեզ: Դուք ինձ Վարդապետ ու Տեր եք կոչում. և լավ եք անում, քանի որ իսկապես ե՛մ. իսկ արդ, եթե ես՝ Տերս ու Վարդապետս, լվացի ձեր ոտքերը դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ. որովհետև մի օրինակ տվի ձեզ, որ, ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք:...»

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԺԳ 1-15

37 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Ոտնլվա, ԺԱ դարի առաջին քառորդ (խճանկար Ս. Ղուկաս վանքից, Փոկիս)

Անդրադառնալով այս խորհրդավոր իրողությանը՝ Ավետարանիչը մանրամասն պատմում է, թե ինչպես Հիսուս, վեր կենալով ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց հանդերձները, մեջքին սրբիչ կապեց, վերցրեց ջրով լի կոնքը և սկսեց հերթով լվանալ առաքյալների ոտքերը: Ոտնալվայի արարողությամբ Քրիստոս ավարտեց Իր աշակերտների մաքրագործումը ադամական մեղքից՝ կատարելով յուրօրինակ մկըրտության ծես: Աստծո Որդին, ցուցադրելով Իր կատարյալ սերը մարդկանց նկատմամբ, այս կերպ արտացոլեց քրիստոնեության մեծագույն առաքինությունը՝ խոնարհությունը, որն իբրև պատվիրան ավանդեց սիրեցյալ աշակերտներին:

Քրիստոնեական արվեստում ոտնլվայի առաջին պատկերները պահ- 55
պանվել են Դ—Ե դարերի քանդակազարդ տապանաքարերի վրա: Ե

դարի մի սարկոֆագի վրա պատկերված է Հիսուս՝ ձեռքին սրբիչ, իսկ Պետրոս առաքյալը հանում է իր ոտնամանը: Հայկական արվեստում ոտնլվայի հնագույն պատկերը գտնվում է Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարների շարքում (921 թ.): Իսկ մանրանկար հնագույն նմուշը զետեղված է «Վեհափառի Ավետարանում» (Մատենադարան, ห. 10780, էջ 249 ա, ԺԱ դարի սկիզբ):

Ոտնլվայի պատկերագրական հիմնական կառույցը հետևյալն է. մանրանկարի ձախ մասում պատկերվում է Հիսուս, Նրա դիմաց Պետրոս առաքյալը, որի ոտքերը սովորաբար դրված են լինում մկրտության ավազանի նմանվող մեծ, լայնաբերան կոնքի մեջ: Ոտնլվայի մյուս մասնակիցները խմբված են Պետրոսի ետևում և սպասում են իրենց հերթին: Նրանցից մեկն արդեն նախապատրաստվում է, հանելով ոտնամանը:

Այս տեսարանում հայտնի է Հիսուսի պատկերման երեք հիմնական տարբերակ՝ կանգնած կամ թեթևակի առաջ թեքված. (հնագույն օրինակը հայտնի է Զ դարից) հաջորդը՝ Պետրոսի դիմաց՝ գահավորակի վրա նստած (այս երկուսը առավել տարածված օրինակներն են), ի դեպ, Հիսուսի կանգնած դիրքը հանդիպում է դեռևս վաղ քրիստոնեական արվեստում, իսկ նստած դիրքը վերագրվում է բյուզանդական պատկերագրությանը: Եվ վերջապես երրորդ տարբերակը ծնրադիր պատկերումն է (սա գալիս է Կաթոլիկ Եկեղեցու ավանդությունից): Ծնրադիր դիրքով Հիսուսին բավական հաճախ հանդիպում ենք Վասպուրականի նկարազարդ ձեռագրերում: Կան մանրանկարներ, որտեղ Հիսուս պատկերված է Պետրոսի ոտքը բռնած, իսկ վերջինս ձախ ձեռքով ցույց է տալիս գլուխը: Ձեռքի շարժման իմաստը պարզաբանում են ոտնլվայի ընթացքում Պետրոսի արտասանած հետևյալ խոսքերը «Տէ՛ր, ոչ թե միայն իմ ոտքերը, այլեւ իմ ձեռքերն ու գլուխն էլ լուա»:

Մեկնաբանելով ոտնլվայի խորհուրդը, Ս. Գրիգոր Տաթևացին հետաքրքիր զուգահեռ է տանում Հին և Նոր կտակարանների միջև: Մասնավորապես հիշեցնելով Ադամի անկման պատմությունը՝ Տաթևացին գրում է. «... զի նախաստեղծքն Ադամ եւ Եւա... ՈՏԻՒՔ գնացին ի ծառն եւ կերին ի պտղոյն եւ յանցեան ի պատուիրանն Աստուծոյ... վասն որոյ լուաց ՁՈՏՍ աշակերտացն եւ ազատեաց ի դատապարտութենէ նախաստեղծիցն»: Եվ սա Հիսուս կատարեց կատարյալ խոնարհությամբ, քանզի «... յերկինս հանող է խոնարհութիւն...», որին հակառակ Ադամը, լցվելով սատանայական հպարտությամբ, զրկվեց Աստծո Փառքից և ընկավ երկիր: Տերունական մանրանկարների շարքում «Ոտնլվա» կոմպոզիցիային հաջորդում է «Խորհրդավոր ընթրիքը»:

38 ՆԿԱՐԻՉ ԾԵՐՈՒՆ, Ոսկվա (Ավետարան, 1391, ՄՄ № 8772)

39 ՆԿԱՐԻՉ ԻԳՆԱՏԻՈՍ ՀՈՌՈՄՈՍՑԻ, Ոսկվա (Ավետարան, 1236 թ., Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք, № 36)

40 ՆԿԱՐԻՉՆԵՐ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ, Ոսկվա («Գլաձորի Ավետարան» 1300—1307, Կալիֆոռնիայի համալսարանի գրադարան)

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

... Դասուց իւրոց աշակերտաց,
Զոր նախ բանիւ վարդապետեաց,
Այսօր գործով զծայրագոյն,
Եցոյց յինքեան զխոնարհութիւն...
Եթե տէրս, ասէ Էից՝ և վարդապետս բոլորից,
Զաշակերտացդ և զծառայից՝ զատրս լուացի ի հնոյ աղտից.
Միմեանց և դուք համբերութեամբ ցուցէք ըզնոյնն խոնարհութիւն...
Զոր մաքրեցեր յաւազանին՝ մաքուր ձեռոք զոտս նոցին՝
Եվ ուսուցէր խոնարհութեամբ՝ յաղթող լինել չար հպարտին:

41 ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ, Վերջին ընթրիք («Թարգմանչաց Ավետարան», 1232 թ., ՄՄ № 2848)

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔ

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ— ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ: Այստեղ նա հայտնում է իր մոտալուտ մատնության մասին, սահմանում հաղորդության խորհուրդը և կարևոր պատգամներ տալիս աշակերտներին: Վերջին ընթրիքի մասին հանգամանորեն պատմում են բոլոր չորս ավետարանիչները:

«Եվ Բաղարջակերաց տոնի առաջին օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Ո՞ւր ես կամենում՝ պատրաստենք քեզ համար զատիկը, որ ուտես»: Եվ Հիսուս նրանց ասաց. «Գնացեք քաղաք այսինչ անձի մոտ ու նրան ասացե՛ք. Վարդապետն ասում է՝ իմ ժամանակը մոտեցել է, քեզ մոտ եմ անելու զատիկը իմ աշակերտների հետ միասին»: Եվ աշակերտները արեցին, ինչպես Հիսուս իրենց հրամայեց, ու զատիկը պատրաստեցին:

Եվ երբ երեկո եղավ, տասներկու աշակերտների հետ սեղան էր նստել: Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մեկն ինձ մատնելու է»: Եվ նրանք խիստ տխրեցին. նրանցից յուրաքանչյուրն սկսեց ասել Նրան. «Միթե ե՞ս եմ, Տե՛ր»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Ով իր ձեռքն ինձ հետ պնակի մեջ մտցրեց, նա՛ է ինձ մատնելու: Մարդու Որդին կգնա, ինչպես նրա մասին գրված է, բայց վա՜յ այն մարդուն, ում ձեռքով կմատնվի մարդու Որդին: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ»: Հուդան, որ մատնելու էր Նրան, պատասխանեց ու ասաց. «Միթե ե՞ս եմ, Վարդապե՛տ»: Նրան ասաց՝ դո՛ւ ասացիր:

Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Հիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է՝ շատերի վրա՝ մեղքերի թողության համար: Բայց ասում եմ ձեզ, այսուհետև ես այլևս որթատունկի բերքից չեմ խմի մինչև այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորը իմ Հոր արքայության մեջ»:

Եվ օրհներգեցին ու ելան Ձիթենյաց լեռը»:

ՄԱՏԹԵՈՍ ԻԶ 17-30
տե՛ս նաև
ՄԱՐԿՈՍ ԺԴ 12-26,
ՂՈՒԿԱՍ ԻԲ 7-23,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԺԳ 1-38,
ԺԴ 1-31, ԺԵ 1-27,
ԺԶ 1-33, ԺԷ 1-26

Բոլոր չորս Ավետարանները, միմյանց լրացնելով, պատմում են Զատկական ընթրիքի մասին (Հիշատակում է նաև Պողոս Առաքյալը՝ Ա Կորնթ. ԺԱ. 17—34):

Հրեական բաղարջակերաց տոնի օրը (Պասքա-Զատիկ), իր եղերական մահվանից առաջ, Հիսուս Քրիստոս տասներկու աշակերտներին հավաքեց զատկական ընթրիքի, որի ընթացքում լվաց աշակերտների ոտքերը, պատվիրաններ տվեց, ապա մարգարեացավ Հուդայի մատնության մասին և ամենակարևորը՝ հաստատեց Հաղորդության խորհուրդը: Այս վերջինիս պատվին զոհաբերության ընթրիքը ստացավ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ անունը (ըստ հայկական ավանդության այն անվանում են Վերջին ընթրիք):

Հրեական զատիկը հիշատակումն էր հրեա ժողովրդի՝ Եգիպտոսի (մեղքի) գերությունից ազատվելու: Տոնի պատվին հրեաները գումարում էին հավաքներ, նշակում բաղարջ և կատարում գառան զոհաբերություն:

Հիսուս և Իր աշակերտները, չխախտելով Մովսեսական օրենքը, նույնպես նշեցին Զատիկը, սակայն այս արարողության ժամանակ, հակառակ հրեական արտաքին ծեսի, կատարվեց հոգևոր զոհաբերություն: Աստծո Որդին՝ Գառն Աստծո, բաժանելով առաքյալներին ճաշակելիք հացն ու գինին, խորհրդաբանորեն դրանք ներկայացրեց որպես իր Անձի զոհաբերություն (որը իրագործվեց Խաչի վրա), հացը և գինին վերածելով իր մարմնի և արյան: Աստված իր Որդու զոհաբերությամբ մաքրագործեց մարդկության մեղքը, Գրիգոր Տաթևացու խոսքով՝ «զի հացն զփրկութիւն մարմնոյն ցուցանէ եւ զգինին՝ զհոգւոյն»: Ճաշակելով Քրիստոսի մարմինը և արյունը՝ աշակերտները հաղորդվեցին Աստծո հետ՝ դառնալով նրա մարմնի անդամները (ապագա Եկեղեցին): Հաղորդվեց նաև Հուդան՝ սատանայի կամակատարը, քանզի Հիսուսի արյունը հեղվեց համայն մարդկության՝ արդարների և մեղավորների համար անխտիր: Քրիստոնեական արվեստում «Վերջին ընթրիքի» պատկերները պահպանվել են Ե դարից: Հայկական արվեստում այն հայտնի է ԺԱ դարի պատկերազարդ Ավետարաններից («Մողնու Ավետարան», ՄՄ № 7736, 1038 թվականի Ավետարան, ՄՄ № 6201 և այլն):

«Խորհրդավոր ընթրիք» գեղարվեստական կոմպոզիցիան կազմվում է հետևյալ կերպ. սեղանի ձախ մասում պատկերվում է Հիսուս, աջում՝ առավելապես Պետրոս առաքյալը, Հիսուսից ձախ՝ Հովհաննեսը: Մյուս առաքյալները նստած են սեղանի ետնամասում, նրանց կեցվածքը շփոթմունք է արտահայտում: Սեղանի վրա պատկերվում են պնակներով հաց, գինու սկահակներ, ձկներ և զանազան պիտույքներ:

Տեսարանի պատկերագրության մեջ հայտնի է սեղանի պատկեր-

42 ՆԿԱՐԻՉՆԵՐ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ, Վերջին ընթրիք («Գլաձորի Ավետարան», 1300—1307, Կալիֆոռնիայի համալսարանի գրադարան)

ման երեք հիմնական տարբերակ՝ կլոր, ձվաձև (սրանք հայտնի են վաղ պատկերներից) և հարթ ու երկարավուն: Հանդիպում են նաև վերը նշված սեղանաձևերի զանազանակերպ տարբերակներ պատկերազարդ և ոճական մշակման յուրահատուկ դրսևորումներով:

Միջնադարյան նկարիչները, ստեղծելով այս թեմայի պատկերագրությունը, շեշտադրում էին հետևյալ խորհրդանիշ պատկերները՝ ճարտարապետական կառույցը, աստղազարդ երկինքը, սեղանը: Կերպարների մեջ առանձնանում են Քրիստոս, Հովհաննեսը (սիրո արտահայտիչը՝ առ Հիսուս), Պետրոսը (հաստատակամություն՝ վեմ), Հուդան (մատնություն), յուրաքանչյուրը կրելով որոշակի խորհրդաբանական և գաղափարական իմաստ, որով և պայմանավորված է նրանց պատկերման ձևը: Աշակերտների ընդհանուր թիվը, ըստ դարերի, փոփոխվում է՝ 3—5 և ավելի՝ մինչև տասներկու:

Ոճավորված ճարտարապետական կառույցը խորհրդանշում է վերնատունը (երբեմն պատկերվում է եկեղեցու տեսքով), որտեղ հավաքվեցին Հիսուս և Իր աշակերտները: Սեղանն աստվածային երկնքի խորհրդանիշն է (նաև զոհասեղանի իմաստն ունի՝ պատարագի սեղան): Աստղազարդ երկինքը ցույց է տալիս ընթրիքի գումարման ժամանակը, որը նաև կապվում է մատնիչ Հուդայի անձի հետ: Վերջինս միշտ պատկերվում է կիսադեմ, հաճախ առանց լուսապսակի կամ կես լուսապսակով (այդպես է ներկայացվում նաև բուն մատնության տեսարանում): Այս կանոնը հետագայում մոռացության է տրվում: Պատկերագրության մեջ այսպես է արտահայտվում Հիսուս Աստծո և Հուդայի (սատանա) հակադրությունը: Հուդան խորհրդանշում է այս աշխարհի մեղքի ու մահվան գաղափարը: Այդ է պատճառը, որ մանրանկարներում պատկերվող երկինքը (գիշեր) արտացոլում է այն խա-

43 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐՉ. Վերջին ընթրիք (Ավետարան ԺԴ դ., ՄՄ № 316)

44 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Վերջին ընթրիք, ԺԹ դարի առաջին կես (Հայաստանի Ազգային պատկերասրահ)

45 ՆԿԱՐԻՉ ԴԻՐԿ ԲՈՒՈՏՍ, Խորհրդավոր ընթրիք, 1464—1467 թթ. (Լուվեն, Ս. Պետրոս եկեղեցի)

վարածին իրականությունը, որը չընդունեց Աստծո ուղարկած Լույսը՝ Հիսուս Քրիստոսին: Հուդան երբեմն պատկերվում է իր կատարած մատնության վարձի քսակը ձեռքին:

«Խորհրդավոր ընթրիքը» ոչ միայն մանրանկարչության, այլև որմնանկարչության ու հաստոցային գեղանկարչության մեջ առավել տարածված պատկերներից է:

ՇԱՐԱԿԱՆ (հատված)

... Ընդ բաղարջին հաց անխրմոր,
Եւ ըզմարմին իւր զերկնաւոր.
Ըզկուսածինն անսերմնաւոր,
Զանապականս և զհոգեւոր,
Ընդ ոչխարին արեան ուխտին,
Եւ մեզ զարիւն իւր ուխտ կրկին...

Զթագաւորն արարածոց,
Զհացն կենաց եւ քաղցելոց,
Եվ զբաժակն ուրախարար,
Որք յԱդամայ տրրտմելոց.
«Այս Նոր Ուխտ է իմոյ արեան՝
Փոխան հընոյ ուխտին արեանց,
Զոր յիշատակ իմ առնիցէք,
Մինչև եկից ես միւսանգամ»:

46 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ, Խաչելություն (Ավետարան, 1268 թ., ՄՄ № 10675)

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ



ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ— ՄԱՏՆՈՒԹՅԱՆ, ԱՆԱՐԴԱՐ ԴԱՏԻ ՈՒ ԴԱՏԱՎՃՌԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉՎԵԼԸ ԳՈՂԳՈԹԱՅԻ ԲԱՐՁՐՈՒՆՔՈՒՄ: Բոլոր չորս ավետարանները միմյանց լրացնելով ներկայացնում են Խաչելությունը, հայտնելով բազմաթիվ մանրամասներ:

«... կուսակալի զինվորները Հիսուսին վերցրին տարան ապարանք և ամբողջ գունդը Նրա գլխին հավաքվեց... Եվ փշերից պսակ պատրաստելով՝ դրեցին Նրա գլխին...: Եվ երբ Նրան ծաղր ու ծանակի ենթարկեցին... տարան Նրան խաչը հանելու: Եվ դուրս ելնելով՝ գտան կյուրենացի մի մարդ՝ Սիմոն անունով, ու նրան ստիպեցին, որ Նրա խաչը կրի: Եվ հասնելով Գողգոթա կոչված տեղը, որ նշանակում է կառափնատեղի, Հիսուսին լեղի խառնած գինի տվեցին խմելու, և երբ համտեսեց, չկամեցավ խմել: Եվ Նրան խաչը հանելով՝ բաժանեցին Նրա զգեստները՝ վիճակ գցելով, որպեսզի կատարվի այն խոսքը, որ ասվեց մարգարեի կողմից. «Իմ զգեստները բաժանեցին իրենց մեջ և իմ պատմուճանի վրա վիճակ էին գցում»: Ու նստած Նրան պահպանում էին: Եվ Նրա գլխի վերևը դրեցին Նրա հանցապարտության գիրը, թե՝ սա՛ է Հիսուսը՝ հրեաների թագավորը: Միևնույն ժամանակ Նրա հետ խաչը հանեցին երկու ավազակներ՝ մեկը Նրա աջից, և մյուսը՝ ձախից:

Եվ մոտով անցնողները հայհոյում էին Նրան... Եվ վեցերորդ ժամից սկսած ամբողջ երկրի վրա խավար եղավ մինչև իններորդ ժամը: Իններորդ ժամի մոտ Հիսուս բարձր ձայնով գոչեց ու ասաց. «Էլի՞, էլի՞, լա՞մա սաբաքթանի», այսինքն՝ Աստվա՞ծ իմ, Աստվա՞ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ: Այստեղ կանգնածներից ոմանք, երբ լսեցին, ասացին. «Դա Եղիային է կանչում»: Եվ նրանցից մեկն իսկույն վազեց, քացախով թաթախված սպունգ վերցրեց և մի եղեգի վրա անցկացնելով՝ տվեց Նրան, որ խմի: Իսկ ուրիշներ ասում էին. «Թող տեսնենք, թե Եղիան կգա՞, որ դրան փրկի»:

ՄԱՏԹԵՈՍ ԻԷ 27-56

«Իսկ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին Նրա մայրը և Նրա մորաքույրը՝ Կղեովպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուս տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին Նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ:

Այնուհետև Հիսուս գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց՝ ծարավ եմ: Եվ այնտեղ քացախով



47 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Խաչելություն, ԺԱ դարի առաջին քառորդ (խճանկար Ս. Ղուկաս վանքից, Փոկիս)

լի մի ամամ կար. նրանք լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա բերանին: Եվ Հիսուս լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը խոնարհեցնելով՝ հոգին ավանդեց: ... Երբ եկան Հիսուսի մոտ և տեսան, որ արդեն մեռած էր, Նրա սրունքները չկոտրեցին, այլ զինվորներից մեկը տեգով խոցեց նրա կողերը, և իսկույն արյուն և ջուր ելավ: ... Այս պատահեց, որպեսզի կատարվի գրվածը, թե՝ Նրա ոսկորը չպիտի փշրվի: Եվ դարձյալ մյուս գրվածն ասում է. «Պիտի նայեն Նրան, ում խոցեցին»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԺԹ 17-37
տե՛ս նաև
ՄԱՐԿՈՍ ԺԵ 21-41,
ՂՈՒԿԱՍ ԻԳ 26-49



48 ՆԿԱՐԻՉՆԵՐ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ, Խաչելություն («Գրլաձորի Ավետարան», 1300—1307, Կալիֆոռնիայի համալսարանի գրադարան)

49 ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, Խաչելություն, 1878 թ. (Ավետարան, 1297 թ., ՄՄ № 1482)

Տերունական մանրանկարների շարքում «Խաչելություն» թեման ամենից տարողունակն ու ընդգրկունն է: Խաչի խորհրդի մեջ է խըտացված Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի և գործունեության աստիճանական զարգացման գերագույն նպատակը: Աստծո Որդին անմնացորդ նվիրումով կատարեց մարդկությանը փրկության ճշմարիտ ճանապարհ ցույց տալու սրբազան առաքելությունը, զոհաբերելով Ինքն Իրեն՝ մինչև վերջ խմեց մարդկանց անօրինություններով լի դառը բաժակը, դառնալով Քավիչը մարդկային մեղքի և այս գիտակցումով խաչի վրա արտասանեց. «Ամէն ինչ կատարված է»: Աստծո Գառան պատարագումով կատարվեցին, իրենց լրմանը հասան Հին Կտակարանի մարգարեների բոլոր գուշակությունները Մեսիայի գալստյան և փրկչական առաքելության վերաբերյալ:

Խաչելությունը մանրամասնորեն նկարագրված է բոլոր չորս Ավետարաններում, որոնք հաճախ լրացնում են միմյանց (Ըստ Հովհաննեսի՝ խաչափայտը հենց Ինքը՝ Հիսուսն էր տանում):

Քրիստոնեական արվեստում «Խաչելության» թեմայի պատկերագրական կերպը մինչև իր լիարժեք և վերջնական ձևավորումը անցել է կոմպոզիցիոն մշակման բավական բարդ ուղի: Վաղ շրջանում՝ քրիստոնեության արշալույսին, խաչելությունը պատկերվում էր հավատարթեն խաչի տեսքով (Գ դար), և թեմայի մեկնաբանությունը զուտ խորհրդանշական էր: Խաչելության (Զոհաբերության) գաղափարն էին արտահայտում նաև Հին Կտակարանի հետևյալ թեմաներով կատարված պատկերները՝ «Աբրահամը զոհաբերում է իր որդի Իսահակին», «Դանիելը առյուծների գբում» և այլն, որոնք խորհրդաբանորեն ընկալվում էին որպես Քրիստոսի պատարագման նախատիպեր: Հետագայում խաչելության արտահայտիչն էր նաև «Գառն Աստծո» պատկերը:

Խաչելության առաջին պատկերները, ըստ Ավետարանների նկարագրության, հայտնվում են Ե—Զ դարերում: Առաջին պատկերը 430 թ. Հռոմի Ս. Սաբինայի փայտե դռների քանդակն է, որը ներկայացնում է երեք խաչերի պատկերագրական ձևը: Ժամանակի ընթացքում

50 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Խաչելություն (Սաղմոսագիրք, 1222 թ., Լոնդոնի հնագիտական ընկերություն)

այս տեսարանը սկզբնական պարզ կառույցից վերաճում է բազմաֆիգուր գեղարվեստական կոմպոզիցիայի: «Ռաբուլայի Ավետարանում» Հիսուսի ոտքերի տակ պատկերված զինվորները վիճակ են գցում նրա հագուստի վրա: Ներկա են Մարիամը՝ մյուս կանանց հետ և Հովհաննեսը, որը ձեռքը դրել է ծնոտին, որպես սգո նշան:

Հայկական արվեստում ևս խաչելության հնագույն նմուշները խաչաքանդակներն են, որոնց բազմաթիվ օրինակներ պահպանվել են Դ—Ե դարերի եկեղեցիների պատերին, իսկ կոմպոզիցիոն տեսարանի ամենից վաղ պատկերը գտնվում է Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարներում (921 թ.): Այս որմնանկարի պատկերագրությունը հետևում է հնավանդ և առավել տարածված տարբերակին, որ-



51 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Խաչելություն (Սաղմոսագիրք, 1230 թ., Փարիզի Ազգային գրադարան)

տեղ խաչված Հիսուս պատկերված է կարճթևք շապիկով, խաչի աջ կողմում կանգնած է Տիրամայրը և սուրբ կանայք, ձախից Հովհաննես ավետարանիչն է, իսկ խաչաթևերի տակ կանգնած են տեգ և սպունգ կրող զինվորները: ԺԴ դարի բյուզանդական արվեստում Մարիամը պատկերվում է ուշաթափված, կանանց ձեռքերի վրա ընկած, իսկ Հովհաննեսը՝ ցավից կքված:

Հայկական մանրանկարչության մեջ խաչելության առաջին պատկերները մեզ են հասել ԺԱ դարից («Վեհափառի Ավետարան» ՄՄ № 10780, «Մողնու Ավետարան», ՄՄ № 7736 և այլն): Այս ժամանակ Հիսուսին պատկերում էին մերկ, կոնքակապով:

Պատկերագրական հին ծագում ունի նաև Քրիստոսին և Նրա երկու կողմերում խաչված ավազակներին ներկայացնող նկարաձևը,



որը նույնպես տարածված էր հայկական արվեստում: Խաչելության տեսարանի այս հիմնական տարբերակները հիմք դարձան հետագա կերպարային խորհրդանշական լրացումների համար: Մասնավորապես ավելացվում էր գործող անձանց թիվը, պատկերվում էին խաչի մոտ կանգնած և մեղքերի թողություն հայցող իշխաններ և թագավորներ, պատվիրատուներ և այլք: «Խաչելությունից» հետո պատկերվում էին խաչից իջեցման, ողբի, թաղման տեսարանները:

Կանոնի համաձայն, խաչյալ Հիսուս պատկերվում է երկար մազերով, մորուքով. գլուխը աջ կողմ թեքած (խոնարհության նշան), աչքերը բաց կամ փակ: Գլխի շուրջ խաչազարդ լուսապսակն է, վերևում՝ «գիր վնասուն»: Որոշ օրինակներում նրա գլխի մոտ պատկերվում են քերոբվեներ կամ հրեշտակներ: Ձեռքերի ափերը գամված են խաչաթևերին, ոտքերը մեկ կամ երկու գամով ամրացված են պահպանակի վրա: Հիսուսի մարմինը ուղիղ կամ կոր դիրքով է: Խաչի հիմքը դրված է Գողգոթան խորհրդանշող վեմի վրա, որի ներսում պատկերվում է ոճավորված ադամագանգը (ըստ ավանդության այդ-

տեղ էր թաղված Ադամը)։ Գանգը մահվան՝ սատանայի խորհրդանիշն է, որը պարտվեց Հիսուսի ոտքերի տակ։ Հայկական մանրանկարներում Քրիստոսի կերպարը հանգստություն է արտահայտում, մինչդեռ սկսած ԺԲ—ԺԳ դարերից լատինական պատկերագրությունը Նրան ներկայացնում էր փշե պսակով՝ ընդգծելով Քրիստոսի չարչարանքները խաչի վրա։ Այս տեսարանում առկա կարևորագույն խորհրդանիշը Խաչն է, այն դրվեց երկրի և երկնի միջև որպես Աստծո և մարդկանց հաշտության նշան, Նոր Ուխտ, որը սրբագործվեց Հիսուսի մաքրագործող արյամբ։ Խաչի գագաթին երբեմն պատկերվում է Հավալասան թռչնի բույնը, ուր նա պատռելով կուրծքը, իր արյամբ կերակրում՝ կենդանացնում է ձագերին, այլաբանորեն ներկայացնելով Հիսուսի մարմնին ու արյանը հաղորդվելու խորհուրդը։ Խաչի գագաթը խորհրդանշում է Աստծո Երկնքի դռների բացվելը, իսկ ստորին մասը՝ դժոխքի ավերումը, աջ և ձախ թևերը համապատասխանաբար նշանակում են շնորհների բաշխում և մեղքերի թողություն։ Պատկերի մեջ

52 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Խաչելություն (Գանձարան, 1575 թ., Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, № 185)

53 ՆԿԱՐԻՉ ՀՈՎՆԱԹԱՆ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ, Խաչելություն, ԺԸ դարի երկրորդ կես (Հայաստանի Ազգային պատկերասրահ)

առկա արևն ու լուսինը խորհրդանշում են Հիսուսի գալիք դատաստանը և Աստծո հաստատուն անփոփոխ վիճակը (արև) ի հակադրություն սատանայի (լուսին) փոփոխական անկատարությանը: Խաչի աջ և ձախ մասերում (արևմտյան արվեստում և Կիլիկիայում) երբեմն պատկերվում են երկու այլաբանական կերպար՝ մեկը թագակիր (դրոշով), մյուսը՝ թագը գլխից ընկնելիս, որոնք համապատասխանաբար խորհրդանշում են քրիստոնեական Եկեղեցին և հրեական սինագոգը, որոնցից առաջինը ստանում է Աստծո Փառքը, իսկ երկրորդը զրկվում է դրանից:

54 ՆԿԱՐԻՉ ՎԵՐՈՆԵԶԵ, Խաչելություն, ԺԶ դարի կեսեր (Փարիզ, Լուվր)

55 ՆԿԱՐԻՉ ՋՈՏՏՈ, Ողբ, մոտ 1306—1313 թթ. (Կապելլա Սկրովենտի, որմնանկար)

Քրիստոսի խոցված կողից բխած արյունը և ջուրը ընկալվում են որպես հաղորդության և մկրտության խորհուրդներ: Զարկված՝ կողը կրում է նաև Քրիստոսի Եկեղեցու սկզբնավորման գաղափարը, Գրիգոր Տաթևացու խոսքով. «... Թմրեցաւ Ադամ, եւ ի կողից նորա շինեցաւ Եւա, թմրեցաւ Քրիստոս եւ ննջեաց ի վերայ խաչին, եւ ի բրխմանէ կողիցն նորա շինցաւ Սուրբ Եկեղեցի»: Այս է պատճառը, որ խոցված կողի տակ շատ հաճախ պատկերվում է Տիրամայրը, որպես Մայր (Եկեղեցի) ամենայն հավատացյալների:

Հիսուս Քրիստոսի խաչելությունը տիեզերական մաքրագործող իրողություն էր, որն էլ հիմք էր տալիս եկեղեցու հայրերին երկիրը համարել տիեզերքի կենտրոն:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

— Ո՞վ Մարիամ, կոյս եւ մայր,
Տաճար լուսոյ իմոյ.
Մի՛ տկարանար դու հոգով
Յիմ ծածկեալ խորհրդոյս:

Ես մարգարէիւք իմովք
Յառաջ զայս ցուցի.
Աբրահամ կախեալ ետես զիս
Խոյ ընդ Սահակայ:

Մովսէս գուշակեաց տեսանել
Ըզկեանս ի փայտի,
Ըստ Դաւթայ ծակեցին զձեռս իմ
Եւ զոտս՝ ի փայտիս:

Ըստ Սողոմոնի եդին ինձ
Պրսակ ի փրշոց,
Ըստ Եսայեայ՝ իբրեւ զոչխար
Ի սպանդ վարեցայ: ...

Արդ, մի՛ վրհատիր, Մարիամ,
Այլ խրնդա՛ յուսով,
Ես յետ յարութեան իմոյ
Քեզ երեւեցայց.

Զհաւր կամս կատարել կամիմ
Առ նոյն վերանամ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ



56 ՆԿԱՐԻՉ ԹԵՈԴՈՐՈՍ, Հարություն (Ավետարան ԺԲ դ., Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, № 1796)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ)— ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԹԱՂՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ՎԿԱՆ ԵՂԱՆ ՆՐԱ ՄԱՐՄԻՆԸ ՕԾԵԼՈՒ ԵԿԱԾ ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ:

Իրողությունը նկարագրում են բոլոր չորս ավետարանիչները:

«... Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը և Սողոմեն գնացին խնկի պատրաստություն տեսան, որպեսզի գնան և օծեն Նրան: Եվ շաբաթվա առաջին օրը, առավոտյան, արևածագին եկան գերեզման: Եվ ասում էին միմյանց. «Քարը գերեզմանի դռնից մեզ համար ո՞վ պիտի գլորի»: Եվ նայեցին ու տեսան, որ գերեզմանից քարը գլորված էր. և այն շատ մեծ էր: Եվ ներս, գերեզման մտնելով՝ տեսան մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմը՝ սպիտակ պատմուճան հագած. և զարհուրեցին: Եվ նա ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, դուք Հիսուսին եք փնտրում՝ խաչված Նազովրեցուն. նա հարություն առավ, այստեղ չէ: Ահավասիկ այն տեղը, ուր Նրան դրել էին: Բայց գնացե՛ք ասացեք նրա աշակերտներին և Պետրոսին, թե ահա Նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այնտեղ կտեսնեք Նրան, ինչպես ձեզ ասել էր»: Եվ երբ այս լսեցին, ելան ու փախան գերեզմանից, քանի որ սարսափահար էին եղել և ոչ ոքի բան չասացին, քանի որ վախենում էին»:

ՄԱՐԿՈՍ ԺԶ 1-8

«... Եվ վերադարձան ու պատմեցին այս ամենը Տասներկուսին և բոլոր մյուսներին: Եվ Մարիամ Մագդաղենացին, Հովհաննան, Հակոբի մայր Մարիամը և նրանց հետ ուրիշներ էին, որ այս բաները պատմեցին առաքյալներին: Բայց նրանց խոսքերը բարբաջանք թվացին և չէին հավատում նրանց: Սակայն Պետրոսը վեր կացավ և վազեց դեպի գերեզման, նայեց ու տեսավ, որ կտավները միայն կային: Եվ գնաց՝ մտքում զարմացած, թե ինչ էր եղել»:

ՂՈՒԿԱՍ ԻԴ 8-12
տե՛ս նաև
ՄԱՏԹԵՈՍ ԻԷ 57-66, ԻԸ 1-15,
ՀՈՎՀԱՆՆԵՍ Ի 1-18

57 ՆԿԱՐԻՉ ՄՈՄԻԿ, Հարություն (Քրիստոսի հայտնությունը Մարիամ Մագդաղինացուն), («Պատերազմի Ա-վետարան», 1302 թ. ՄՄ № 6792)



Ուրբաթ օրը երեկոյան, երբ մեռած Հիսուսին Նրա մերձավորները խաչից իջեցրին և դրեցին գերեզման, չհասցրեցին Նրա մարմինը օծել ըստ հրեական սովորության: Անցավ շաբաթ օրը և մի քանի կանայք, որոնք աշակերտել էին Տիրոջը, վերցնելով անուշահոտ յուղեր, այցելեցին գերեզման՝ կատարելու համար օծման ծեսը: Այստեղ նրանց դիմավորեց Աստծո պատգամաբեր հրեշտակը և տվեց հարության Ավետիսը. «Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ էք փնտրում: Այստեղ չէ, այլ՝ յարեաւ...»: Համառոտ՝ այսպիսին է հարության հրաշափառ և անքննելի խորհրդավոր իրողության պատմությունը, որին մանրամասնորեն անդրադառնում են բոլոր չորս Ավետարանները, (տե՛ս նաև Ա. Կորնթ. ԺԵ, 1—28):

Նախաստեղծ Ադամի (հին մարդ) պատվիրանազանցության հետևանքով ողջ տիեզերքը հայտնվեց մահվան ճիրաններում, և Ադամի հոգեղեն և լուսավոր մարմինը ենթակա դարձավ մահվան: Հիսուս



58 ԱՆՀԱՑՏ ՆԿԱՐԻՉ, Օծում և Հարություն (Ինգեբորգ թագուհու սաղմոսագիրք, 1200 թ., Ծանթիլի թանգարան)

Քրիստոսի (նոր մարդ) խաչի ճանապարհով և հարությամբ վերականգնվեց ադամական մարմնի նախնական անապական վիճակը, խորտակվեցին դժոխքի դռները, և մահվան հրեշտակը (սատանան) զրկվեց իր մահաբեր խայթից՝ կապվելով Քրիստոսի կենարար խաչի և հաղթական հարության ամենազոր կապանքով:

Քրիստոնեական արվեստում հարության հայտնի հնագույն պատկերը Դուրա Եվրոպոսի մկրտարանի որմնանկարն է՝ 235 թ.: Այստեղ պատկերված են կանայք և երկու աստղ Հիսուսի գերեզմանի վերևում, որպես հրեշտակների խորհրդապատկեր: 400 թվականից պահպանված մի օրինակում պատկերվում է Հիսուսի՝ գերեզմանից ելնելը: Հայկական արվեստում հարության պատկերը հայտնի է Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարներից (921 թվական):

Հարության կամ «Հրեշտակի հայտնությունը յուղաբեր կանանց» տեսարանի ավելի ավարտուն կոմպոզիցիոն պատկերների հանդիպում ենք ԺԱ դարի ավետարաններում, ինչպիսիք են՝ Կարսի Գագիկ թագավորի Ավետարանը (Երուսաղեմ Ս. Հակոբեանց վանքի ձեռագրատուն № 2556), 1038 թվականի Ավետարանը (ՄՄ № 6201) և այլն:

Հարության պատկերագրական հնագույն նմուշներում հրեշտակը Հիսուսի գերեզմանի մոտ և յուղաբեր կանայք հաճախ ներկայացվում են առանձին պատկերներով, իսկ հետագայում՝ ամբողջական կոմպոզիցիոն համակարգում: Հարության տեսարանի պատկերագրական հիմնական նկարաձևը հետևյալն է. նկարի աջ և ձախ մասում պատկերվում է հրեշտակը և գերեզմանը, որին հակառակ կողմից մոտենում են կանայք, կամ արդեն իսկ կանգնած են գերեզմանի մոտ: Յուղաբեր կանայք ներկայացվում են թվով երեքը (ըստ արևմտյան ավանդության), երկուսը (ավելի հին՝ բյուզանդական օրինակներ), որոշ մանրանկարներում գործող անձանց թիվն ավելի մեծ է: Մարիամ Մագդաղինացին պատկերվում է առաջինը, երբեմն նրա կերպարը արտահայտում է վախ և շփոթմունք: Կանանց ձեռքին կան մեկ կամ մի քանի յուղի սրվակներ: Հաճախ հանդիպում է Հարության տեսարան, որտեղ գերեզման է այցելում միայն Մարիամ Մագդաղինացին: Այն հայտնի է «Քրիստոսի հայտնությունը Մարիամ Մագդաղինացուն» անունով: Հարության հին հայկական որոշ պատկերներում կանանց հետ ներկայացվում են Պետրոս և Հովհաննես առաքյալները, օրինակ՝ Աղթամարի որմնանկարում:

Հրեշտակները պատկերվում են թվով մեկը կամ երկուսը, թևավոր կամ անթև: Հայտնի է նրանց ձեռքերի շարժման երկու հիմնական դիրք՝ ուղղված դեպի երկինք և դեպի գերեզմանի ներսը: Երբեմն հրեշտակները ձեռքերին ունեն գավազան կամ շեփոր:

Քրիստոսի գերեզմանը ունի պատկերման մի քանի տարբերակ՝

59 ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐԻՉ, Հարություն, 1380՝ թ. (Պրագայի Ազգային պատկերասրահ)

60 ՆԿԱՐԻՉ Ա. ԿԱՐԱՉԻ, Յուղաբեր կանայք և հրեշտակը, 1605 թ. (Սանկտ-Պետերբուրգ, Էրմիտաժ)

Ս տառի ձևով (առավելապես հին օրինակներում), սարկոֆագի և վիմափոր գերեզմանի տեսքով: Գերեզմանը պատկերվում է բաց, երբեմն կիսաբաց, վեմը մի կողմ դրած կամ գետնին ընկած, ներսում Հիսուսի վարշամակը և պատանքն է:

Մանրանկարի ստորին մասում կամ անմիջապես գերեզմանի տակ պատկերվում են քնած զինվորները, որոնք պետք է հսկեին Հիսուսի մարմինը, հրեաների անհավատ կասկածամտության պատճառով, իբրև թե աշակերտները չգողանան այն:

Պետք է նշել, որ Ավետարաններում չի նկարագրված Հիսուս Քրիստոսի հարության տեսանելի կերպը, քանզի այն վեր է մարդկային զգայական ընկալումից, սակայն ուշ շրջանի լատինական պատկերագրության մեջ ընդունված էր պատկերել Հիսուսի գերեզմանից դեպի երկինք համբառնալը:

Մեկնաբանելով Սուրբ Հարության խորհուրդը և պատասխանելով այն հարցին, թե ինչու Հիսուս հարությունից հետո առաջինը կանանց երևաց՝ Ս. Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ թէ վասն էր նախ կանանց երեւեցաւ. զի գոյժ մահաբեր ի ձեռն կնոջ եմուտ ի բնութիւն, ուրարտ էր եւ նոքօք լինիլ աւետիս կենաց եւ փրկութեան մարդկան...»:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Նրստեալ կանայքն ողբային
Առ գերեզմանն անմահին,
Երեւելով հրեշտակին՝
Զայն աւետեաց լրսէին.

— Բամից մաքրից անձկալին,
Զոր տապանաւ ծածկէին,
Սիրով յարեաւ սիրելին,
Զբնութիւն յարոյց զԱդամին:

Երկիւղալից լինէին
Պահապանաց խումբ դասին,
Սաւառնացեալ սերովբէն
Հոլաթեւէր ի վիմին:

Ի բաց լինել երկիւղին
Փողէր կանանց տարփալին,
Երթեալ պատմէր զաւետիս
Երամ դասուց Պետրոսին:

— Բաբունից տէր վարդապետն
Այսպէս յարեաւ բաղձալին:
Գոչեմք եւ մեք ընդ նոսին.
— Փա՛ռք յարութեան փրկողին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ



61 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Համբարձում («Անկների Ավետարան», 1287 թ., ՄՄ № 197)

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ— ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՀԱՅՏՆՎԵԼՈՒՑ, ՕՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՇԸՐՋԵԼՈՒՑ ՈՒ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ՏԱԼՈՒՑ ՀԵՏՈ, ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ՝ ՀԱՅՐ ԱՍՏԾՈ ՄՈՏ ՀԱՄԲԱՐՁՎԵԼԸ: Մարկոս և Ղուկաս ավետարանիչներից բացի այդ մասին վկայում է նաև Գործք Առաքելոցը:

«Եվ Ինքը՝ Տեր Հիսուս, նրանց հետ խոսելուց հետո երկինք համբարձավ և նստեց Հոր աջ կողմը: Իսկ նրանք ելան ու քարոզեցին ամբողջ աշխարհում՝ Տիրոջ գործակցությամբ. և իրենց ուղեկցող բոլոր նշաններով հաստատում էին խոսքը»:

ՄԱՐԿՈՍ ԺԶ 19-20

«Հիսուս նրանց ասաց. «Ձեզ տրված չէ իմանալ ժամերը և ժամանակները, որ Հայրը դրեց իմ իշխանության մեջ: Այլ երբ Սուրբ Հոգին հասնի ձեր վրա, զորություն պիտի առնեք և ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը»:

Եվ երբ այս ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, վերացավ, և ամպը Նրան ծածկեց նրանց աչքերից: Եվ մինչդեռ ակնապիշ նայում էին Նրա երկինք գնալուն, ահա նրանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ, որոնք և ասացին. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնել նայում եք երկնքին. այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք Նրան երկինք գնալիս»:

ԳՈՐԾՔ Ա. 7-11,
տե՛ս նաև
ՂՈՒԿԱՍ ԻԴ 50-58

62 ԱՆՀԱՑՏ ՆԿԱՐԻՉ, Համբարձում («Ռաբուլայի Ավետարան», 586 թ., Լորենցիան գրադարան, Ֆլորենցիա)

Հիսուս Քրիստոսի դեպի երկինք համբարձվելը նշանավորեց Նրա երկրային առաքելության փառավոր ավարտը: Զարչարվելով, խաչվելով և թաղվելով, ապա որպես հաղթության պսակ հարություն առնելով՝ Աստծո Որդին համբարձվեց, տեղափոխվեց աստվածային երկինք և նստեց Հայր Աստծո Քերովբեական Գահի աջ կողմում, ինչպես և խոստացել էր իր աշակերտներին:

Համբարձման մասին Ավետարանները պատմում են շատ համառոտ, մասնավորապես նշելով համբարձման վայրը և ձևը:

Քրիստոնեական արվեստում համբարձման տեսարանի հնագույն նմուշները հայտնի են Դ—Ե դարերից: Հայկական արվեստում այդ-օրինակ վաղագույն պատկերները մեզ են հասել Զ դարից (Պտղնիի ու Օձունի եկեղեցիների որմնաքանդակները, Էջմիածնի Ավետարանի

68 ԱՆՀԱՑՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Համբարձում («Վասակ իշխանի Ավետարան», 1268—1284 թթ., Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, № 2568)

փղոսկրյա կազմի փորագիր պատկերները): Մանրանկարչության մեջ դեռ 862 թվականի Մլքե թագուհու Ավետարանի մանրանկարն է (Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ՄՄ № 86): Համբարձման տեսարանի պատկերագրական և կոմպոզիցիոն ավարտուն տեսքը հետևյալն է: Մանրանկարի վերին մասում պատկերվում են՝ Հիսուս Քրիստոսը ձվաձիր մանդորլայի (Աստծո Փառքի առարկայական արտահայտությունը) մեջ և հրեշտակները, որոնք դեպի երկինք են վերափոխում Հիսուսին (արևելյան պատկերագրություն): Արևմտյան օրինակներում երկինք տարվող գահի վրա պատկերվում է Գառն Աստծո: Ստորին մասում, խիստ պայմանական, պատկերված է Զիթենյաց լեռը, որի վրա՝ կենտրոնում կանգնած է Աստվածամայրը, աջից և ձախից՝ մեկական հրեշտակ, Պետրոս և Պողոս առաքյալները

և մյուս առաքյալները բաժանված հավասարաթիվ խմբերի: Համբարձման տեսարանի առավել տարածված այս տարբերակը հայտնի է. Զ

64 ՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, Համբարձում (Այնտարան, 1307 թ., վենետիկ, Մխիթարյանների մատենադարան, № 1917)

65 ՆԿԱՐԻՉ ՄՈՍԻԿ, Համբարձում («Պատերազմի Ավետարան», 1302 թ., ՄՄ № 6792)

դարից (Ռաբուլայի Ավետարան, Մոնցայի սրվակ և այլն)։ Քրիստոնեական արվեստի այս շրջանից հայտնի է մեկ այլ տարբերակ, որտեղ համբարձման գաղափարը արտահայտվում է ավելի խորհրդանշական ձևով, իսկ կոմպոզիցիան՝ պարզ պատկերագրությամբ։ Պատկերվում են երկու ճախրող հրեշտակ, որոնք դեպի վեր են տանում հաղթության դափնեպսակ (փոխարինում է մանդորլային), մեջտեղում՝ հավասարաթև խաչ (խորհրդանշում է Հիսուսին), ինչպես Էջմիածնի Ավետարանի կազմի պատկերում, կամ էլ մանդորլայի մեջ պատկերում էին Հիսուսին (Պտղնի) և երեքական առաքյալ։ Մյուս գործող անձինք համանման գեղարվեստական կոմպոզիցիաներում բացակայում են։

Համբարձման տեսարանում Հիսուս Քրիստոս ներկայացվում է հետևյալ նկարագրերով՝ գոտկատեղից վեր, գահի վրա նստած կամ կանգնած։ Աջ ձեռքով օրհնում է աշակերտներին, ձախում պահում է գիրք կամ գալարափաթեթ (հաճախ փաթեթը բացված է)։ Մանդորլան տանող հրեշտակները լինում են թվով երկուսը կամ չորսը, և պատկերվում են ճախրանքի տարբեր պահերին, հին օրինակներում հանդիպում են նաև կանգնած դիրքով։ Որոշ մանրանկարներում հրեշտակները չեն պահում մանդորլան, այլ միայն նախանշում են այդ շարժումը, որը ցույց է տալիս համբարձման խորհրդավոր բնույթը։ Մանդորլան պատկերվում է մի քանի տարբերակով՝ կլոր, ձվաձիր, ուղղանկյուն և այլն։ Որոշ արևմտյան օրինակներում Քրիստոս բռնել է Հայր Աստծո Աջը, կամ իր ձեռքն ուղղել է դեպի Մարիամն ու աշակերտները։ Ուշ շրջանում Հիսուս պատկերվում էր ամպերի մեջ ընկղմված։

Համբարձման տեսարանում կերպարներից առանձնանում է Աստվածամայրը (կան մանրանկարներ, որտեղ Աստվածամայրը պատկերված չէ)։ Նա պատկերվում է կանգնած, ձեռքերը աղոթքի նշանով պահած կրծքի մոտ (Օրանտ)։ Ավետարաններում և Գործք Առաքելոցում Աստվածամոր ներկայությունը համբարձման պահին հիշատակված չէ, և այս առումով Տիրամոր կերպարը զուտ խորհրդանշական իմաստ է կրում։ Համբարձման տեսարանում խորհրդաբանորեն արտահայտված է Քրիստոսի Եկեղեցու գաղափարը՝ Քրիստոս որպես Գլուխ Եկեղեցու, Աստվածամայրը որպես Եկեղեցի, Մայր հավատացյալների և Բարեխոս, առաքյալները՝ Եկեղեցու անդամներ, որն է Քրիստոսի մարմինը։ Այլաբանորեն այստեղ արվում է Երգ Երգոցում փառաբանված Փեսայի և Հարսի սիրո պատմությունը, Փեսան՝ Հիսուսը և Հարսը՝ Աստվածամայրը (Եկեղեցին), միացած աստվածային կատարյալ սիրով։

Աստվածամոր կողքին կանգնած հրեշտակները խորհրդանշում են երկնային ուժերի ներկայությունը Եկեղեցու մեջ, իսկ Պետրոս և Պողոս առաքյալները մարմնավորում են Եկեղեցու հրեական և հեթանոսական դարձի եկած համայնքները:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, Զիթենյաց լեռան վրա Քրիստոս ընտեղծեց Եկեղեցու նվիրապետական կարգը՝ առաքյալներին շնորհելով կաթողիկոսից մինչև դպիր բոլոր հոգևոր աստիճանները: Անդրադառնալով համբարձման բուն էությանը՝ Տաթևացին գրում է. «Եւ ուր Գրլուխն է՝ անդր ժողովեսցին անդամքն: Եւ ուր Փեսայն է՝ անդ է հրաւիրեալ եւ Հարսն, որ է եկեղեցի սուրբ եւ հաւատացեալք Քրիստոսի»:

66 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Համբարձում (Ավետարան, 1607 թ., Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք, № 412)

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

... Փառաց թագաւորն հարեալ ըզպատերազմ,
Ըզգերողին առեալ զաւար,
Ի բարձունս ելեալ՝ բաշխեաց պարգեւս մարդկան։
...

Դասուց հրեշտակացն ծանուցեալ, թէ Ո՞վ.
Առ գերագոյն կայիցըն հոյլս
Աղաղակելով գոչեն՝ Բացէ՛ք ըզդրունս։

Դրունք յաւիտենից փակեալ յերկինս,
Այսաւր վեր համբարձցին հիմամբք,
Եւ մտցէ ի փառս փառաւք եկեալ արքայ։

Արքայն երկնաւոր մտեալ յերկինս երկնից,
Յորում էր ի սկզբան նոյն միշտ,
Ի գիրկս հայրենի Հոգւոյն սիրով պատիւ։

Պատիւ ի Հայրէ նստեալ յաջմէ իւրմէ,
Մինչեւ զթշնամին ի սպառ
Յապագայցն աւուր ներքոյ դիցէ ոտից։

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ



67 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Հոգեգալուստ («Կեռան թագուհու Ավետարան», 1272 թ., Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, № 2563)

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (ՊԵՆՏԵԿՈՍՏԷ)— ՋԱՏԿԻ ՏՈՆԻՑ ՀԻՍՈՒՆ ՕՐ ԱՆՑ ՆՇՎՈՂ ՏՈՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՇՆՈՐՀՆ ԻՋՆՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ՝ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՎՐԱ:

«Երբ Պենտեկոստէի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծ երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկածի նման. և լցրեց ամբողջ այն տունը, որտեղ նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել այլ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց արտասանել էր տալիս: Եվ կային Երուսաղեմում բնակվող հրեաներ՝ ավելի երկյուղած մարդիկ, քան երկնքի տակ գտնվող բոլոր ազգերի մեջ: Եվ երբ այս ձայնը լսվեց, բազմությունը հավաքվեց ու խռնվեց, որովհետև լսում էին, որ իրենցից յուրաքանչյուրի լեզվով էին նրանք խոսում: Ամենքը հիանում էին և զարմանում. ու միմյանց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են. բայց ինչպե՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով, որ ծնված օրից խոսել ենք: Պարթևներ, մարեր, իլամացիներ, և նրանք, որ բնակվում են Միջագետքում, Հրեաստանում և Գամիրքում, Պոնտոսում և Ասիայում...,— լսում ենք, որ նրանք խոսում են մեր լեզուներով Աստծո մեծագործությունների մասին»: Բոլորը զարմանում էին և միմյանց ասում. «Ի՞նչ պետք է լինի սա»: Իսկ ուրիշներ ծաղրելով ասում էին. «Քաղցր գինուց հարբած կլինեն»:

ԳՈՐԾՔ Բ 1-18

«Եթէ ինձ սիրում եք, կը պահէք իմ պատուիրանները. եւ ես պիտի աղաչեմ Հօրը, եւ նա մի այլ Մխիթարի պիտի տայ ձեզ, որպէսզի յաւիտեան ձեզ հետ բնակուի. ճշմարտութեան Հոգին...»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԺԴ 15-17

68 ՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԴՐՈՒԿԱՎԱՆԵՑԻ («Մողնու Ավետարան», ԺԱ. դարի կեսեր, ՄՄ № 7736)

69 ԱՆՀԱՅՏ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, Հոգեգալուստ (Ավետարան, ԺԵ դ., ՄՄ № 5511)

Սուրբ Հոգու գալուստը՝ Հոգեգալուստը իրականացավ Երուսաղեմում առաքելական հավաքի ժամանակ Զատիկից հիսուն օր անց (Գործք Բ 1—13) Հիսուս Քրիստոսի խոստման համաձայն, որ Նա տվել էր աշակերտներին Հուդայի զազրելի դավաճանության նախաշեմին: Հովհաննես առաքյալն իր Ավետարանում մի քանի անգամ անդրադառնում է Հիսուսի այն խոսքերին, որտեղ ներկայացվում է Մխիթարիչի՝ Սուրբ Հոգու աստվածային էությունը և Նրա ապագա մաքրագործող ներգործությունը աշակերտների վրա:

Հոգեգալստյան տոնը հաճախ անվանում են Պենտեկոստե, որը թարգմանաբար նշանակում է հիսուներորդ: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, Պենտեկոստեն խորհրդանշում է հրեական և քրիստոնեական հինգ գլխավոր տոները, իսկ լայն ընդգրկումով հինգ տասը ազատարար թիվ է և առնչվում է Սուրբ Հոգու հետ, որը ազատագրում և քավում է մարդկային մեղավոր բնությունը, տալով նրան մեղքերի թողություն:

Քրիստոնեական արվեստում հոգեգալստյան թեման իր գեղարվեստական արտացոլումն է գտել դեռևս Զ դարում: Հայկական արվեստում հոգեգալստյան հնագույն պատկերը մեզ է հասել ԺԱ դարից և գեղեղ-

ված է Մողնու Ավետարանում (ՄՄ № 7736)։

Հոգեգալստյան տեսարանի պատկերագրական կառույցը դարերի ընթացքում ձևավորվել է հետևյալ կերպ։ Գործողությունը տեղի է ունենում վերնատանը, որը ներկայացվում է երբեմն ճարտարապետական շինության, երբեմն եկեղեցու տեսքով։ Մանրանկարի վերին մասում պատկերվում է աստվածային երկինքը խորհրդանշող շրջանը, Փառքի նշանը (հաճախ կիսված)։ Շրջանի մեջ պատկերված է Տիեզերական Քահանայապետի Աթոռը, որի վրա դրված է խաչազարդ կտորով ծածկված Ուխտի Տապանակը, հաճախ տապանակի վրա բազմած է աղավնակերպ Սուրբ Հոգին, որն իր հերթին պահում է Հիսուսի խաչը։ Որոշ մանրանկարներում վերնամասը զբաղեցնում է Հիսուս Քրիստոսը՝ նըստած Զորեքկերպյան գահի վրա։ Զորս կենդանիները, որոնք պահում են գահը, խորհրդանշում են չորս ավետարանիչներին։ Ավելի պարզ պատկերագրություն ունեցող մանրանկարներում պատկերված է միայն աղավնակերպ Սուրբ Հոգին։

Մանրանկարի միջին մասը զբաղեցնում են առաքյալները, որոնց թիվը տարբեր է լինում (12-ից—4-ի սահմանում)։ Նրանք նստած են գեղազարդ գահավորակների վրա և դասավորված են բոլորաձև կամ հորիզոնական բաժանմամբ։ Երկնքից առաքյալների վրա են իջնում Սուրբ Հոգու շնորհները՝ լույսի ճառագայթների նմանողությամբ։ Առաքյալների գլխավերևում հրեղեն լեզուներն են, որոնք օժտեցին նրանց տարբեր լեզուներով խոսելու շնորհով։ Հնագույն մանրանկարներում առաքյալների հայացքը ուղղված է դեպի վեր։

Մանրանկարի ստորին մասի կենտրոնի խորանաձև կառույցը խորհրդանշում է վերնատան մուտքը, որի մեջ պատկերված են հրեաներին և հեթանոսներին խորհրդանշող ժողովուրդները։ Վերջիններս հաճախ ներկայացվում են շան գլխով կամ երկդիմի (որոշ պատկերներում «ժողովուրդները» բացակայում են)։

Հոգեգալստյան տեսարանը բաժանվում է երկու պատկերագրական տարբերակի, որոնցից երկրորդում առաքյալների հետ պատկերվում է նաև Աստվածամայրը, որպես Եկեղեցու խորհրդանիշ։ Աստվածամոր ներկայությունը այս տեսարանում հայտնի է դեռևս «Ռաբուլայի Ավետարանի» համանման պատկերից։ ԺԳ—ԺԴ դարերից այս տարբերակը լայն տարածում գտավ արևմտյան արվեստում։

Կան մանրանկարներ, ուր գործողությունը կատարվում է եկեղեցու ներսում՝ բեմի վրա։

Որոշ նկարազարդ Ավետարաններում առաքյալները լուսապսակներով են պատկերվում միայն հոգեգալստյան տեսարանում, որպես սրբագործման արտահայտություն։

70 ՆԿԱՐԻՉ ԶԱՔԱՐԻԱ ԳՆՈՒՆԵՑԻ, Հոգեգալուստ (Ավետարան, 1575 թ., ՄՄ № 4881)

Ս. Գրիգոր Տաթևացին, խոսելով հրեղեն լեզուների մասին, եզրակացնում է. «... նոյն Հոգին է, որ զեօթանասուն և երկու լեզուն բաժանեաց յաշտարակին (նկատի ունի Բաբելոնի աշտարակը) և այժմ նոյն Հոգին է, որ զեօթանասուն և երկու լեզուաց գիտութիւն ետ առաքելացն»:

Առաքյալները, լցվելով Սուրբ Հոգու շնորհներով, ստացան քարոզելու և մկրտելու հոգևոր պաշտոն՝ բոլոր ազգերին Քրիստոսի ամենափրկիչ խաչի ներքո միավորելու համար:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Յանկարծահնչեաց հայրաշարժ բղխումն
Հրահոսավտակ բոցաշաւիղ եռանդն, որոյ դրանդն ի յերկնից
Հողմահնչեաց բոց ի բոցատիպ խառնամանուած լեզուացն:

Ի ձայն բիւրակերպ՝ աւդինատիպ լրումն,
Աւետաքարոզ՝ տրտմականաց դասուց,
Պետրոսեան երամ՝ հրաւիրողակ բարեաց:

Հրով մաքրողին վեր առաքեմք
Իննաբար երգ ի նա մէտ՝
Եւթնաղի շնորհաց Հոգւոյն Սրբոյ:

Հոգի Հաւր, ելումն նոյնատիպ դիմաց,
Հոգի Աստուծոյ, Հոգի զաւրութեան, Հոգի հեզութեան,
Հոգի գիտութեան, իմաստութեան, Հոգի խորհրդոյ և հանճարոյ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, Կ. Պոլիս, 1895:
Նոր Կտակարան, Ս. Էջմիածին, 1975:
Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
Գիրք հարցմանց զերիցս երանեալ սրբոյ օրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյ... Կ. Պոլիս, 1729:
Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյ..., Կ. Պոլիս, 1731:
Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյ..., Կ. Պոլիս, 1740:
Դուրնովո Լ., Հայկական մանրանկարչություն (ալբոմ), Երևան, 1967:
Իզմայլովա Տ., Հովհաննես Սանդղկավանեցի, Երևան, 1986:
Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, Երևան, 1980:
Մանաչյան Մ., Հայկական մանրանկարչություն, հ. Ա, Վենետիկ, 1966:
Մաթևոսյան Ա., Էջմիածնի Ավետարանը, «Էջմիածին», 1990, Ա—Գ:
Մնացականյան Աս., Հայկական զարդարվեստ, Երևան, 1955:
Զուգասզյան Լ., Գրիգոր Ծաղկող, Երևան, 1986:
Տեր-Ներսեսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975:
Քյոսեյան Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի աստվածաբանության շուրջ, «Էջմիածին», 1991, Է—Ը:
Der-Nersessian S., Armenian Art, Paris, 1977.
Grabar A., Christian Art iconography. New York, 1968.
Lexikon der christlichen ikonographie. B I—IV, Rom—Freiburg—Bassel: Wien 1968—1972.
Mathews T., Sanjian A., Armenian Gospel Iconography, The Tradition of the Glajor Gospel, Washington, 1991.
Schiller G., Iconography of Christian Art, vol 1, 2, London, 1971—1972.
Дурново Л. А., Очерки изобразительного искусства Средневековой Армении, М. 1979.
Закарян Л., Из истории Васпураканской миниатюры, Ереван, 1980.
Лазарев В. Н., История византийской живописи, т. I, М. 1947.
Накровский Н. В., Евангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских, СПб. 1982.

Շապիկի վրա՝ Աստվածամայրը մանկան հետ («Էջմիածնի Ավետարան»)

Լուսանկարները՝ **Գևորգ Գասպարյանի**
Սրբագրիչ՝ **Ժաննա Մաթևոսյան**
Լինոտիպիստ՝ **Թամար Վարդանյան**
Գրաշար՝ **Մալխաս Հովհաննիսյան**

Պատվեր 237 Տպաքանակ՝ 3000, գինը պայմանագրային
Երևանի պետհամալսարանի տպարան, Աբովյան 52